

# Կրթություն

Շաբաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутіон» (образование) еженедельник 08.06.2022թ. չորեքշաբթի թիվ 26 (1051)

## Նախկյաց փառքերը վերածնելու հավատով

### Հունիսի 3-ին երկրի դպրոցներում կայացավ «Վերջին դասը»

#### Հետահայաց

#### Նոր սերունդ

... Այսպես ապրեցինք դարեր: Ամեն ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր հայ ծնող իր գավակի կանխատեսելի ապագայի բերկրանքն է ապրում...

Ամեն «Վերջին գանգի» արարողության ամեն հայ ուսուցիչ, իբրև բարի սերմնացան իր հունձքով հպարտ, իր կրթած սաներին իբրև հայոց հարցը լուծող սերունդ է պատկերացնում...

Ու ամեն հայ երիտասարդ, իր անցյալով ծանրաբեռ, իր կյանքի վճռորոշ հանգրվաններին դեմ-հանդիման, իր ճանապարհը դեպի Արարատ է երագում...



Մեզ ելնելու սարեր կան դեռ ու... **Վերադարձի** փառքեր...  
**Ապագա:** Կա՞ մի անհատ կամ ժողովուրդ, որ այս բառը չընկալի՝ որպես իր երազանքների խտացված խորհրդանիշը: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ այս բառը մեզանում ավելի հաճախ գործածական էր՝ իբրև խորագիր, վերնագիր, վերտառություն... Այն բանաստեղծության, կտավի, պատմվածքի, թատերգության, լրագրության ու հրապարակախոսության հիմնական թեմա էր, առանցքային գաղափար...

Այսօր էլ, մեր ժողովրդին պատուհասած ազգակործան ճգնաժամի պայմաններում, այս բառ-խորհրդանիշ-գաղափարը կրկին դառնում է գերիշխող մեր անձնական ու հավաքական գիտակցության մեջ... Բարի երթ մաղթելով մեր շրջանավարտներին դեպի մեծ կյանք՝ դարձյալ մեր մաղթանքների, ծրագրերի, երազանքների ծիրում կիզակետվում է **Ապագան**. մեզանից յուրաքանչյուրի եւ բոլորիս ցանկալի ապագան՝ **Լույս-գալիքը**, որ մոտենում է **Լեռան** տեսքով:

**Հասունություն:** Երկրի կրթօջախներում այս օրերին ընթանում են տարեվերջյան ավարտական քննությունները: Դրանք առավել նշանակալի են հատկապես հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար. դրանց արդյունքում նրանք ստանում են **հասունության** վկայական... այդպես է ավանդաբար անվանվել դպրոցի ավարտական վկայականը...

Հասունությունն սկսվում է վերջին գանգից, թրծվում ավարտական կամ ընդունելության քննությունների բովում, իր լրումին է հասնում մասնագիտություն ձեռք բերելուց կամ ընտանիք կազմելուց հետո: Հասունության հետ գալիս է **համաժամանակյա տարիքը**. դրանից հետո շարունակվում է անհատի կյանքի պատմությունը, բայց նա, որպես կանոն, մնում է հոգով ու նկարագրով անփոփոխ եւ միշտ երիտասարդ... Երիտասարդ ու կենսափխին:

շարունակությունը՝ էջ 3



#### Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը շրջանավարտներին



Հանրակրթական դպրոցների սիրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում եմ բոլորիդ Վերջին դասի առիթով: Այսօր հատում եք ձեր կյանքի ամենակարևոր սահմանագծերից մեկը. մանկությունից անցում եք կատարում դեպի հասուն կյանք, որի առաջին քայլերը ձեզ սպասում են արդեն շաբաթներ անց, երբ պիտի որոշումներ կայացնեք, որոնք ուղիղ ազդելու են ձեր հետագա ողջ կյանքի էության ու որակի վրա:

Խոսքը, իհարկե, առաջին հերթին մասնագիտության ընտրության մասին է, եւ հույս ունեմ, որ մեր սիրելի ուսուցիչները դպրոցական տարիներին ձեզ կարողացել են օժտել այնպիսի հմտություններով, որ կկարողանաք ճիշտ որոշում կայացնել:

Իսկ ո՞րն է ճիշտ որոշումը. ընտրել մասնագիտություն, զբաղմունք, որ սիրում եք ինքներդ եւ ոչ թե ուրիշները: Ընտրել մասնագիտություն, որը անելիք կդառնա ձեզ համար, ամեն օր հնարավորինս վաղ արթնանալու եւ հաճույքով աշխատանքի գնալու մտովիվազի կհաղորդի ձեզ եւ օգուտ կբերի ուրիշներին:

Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր մարդ առաքելություն ունի այս կյանքում: Ձեզնից յուրաքանչյուրն առաքելություն ունի այս կյանքում, եւ մասնագիտության ճիշտ ընտրությունը, հոգով եւ սրտով ընտրությունը առաքելությունը գտնելու գործընթաց է, որը թերեւս ամենակարևոր որոշումն է, որ պիտի կայացնեք առաջիկայում:

Չեմ ուզում, որ գնաք երբեմն ոչինչ չսովող դիպլոմների տեսից, ուզում եմ գնաք առաքելության տեսից, լինի դա ուսուցչի, գիտնականի, բժշկի, զինվորականի, գործարարի, արվեստագետի, ինժեների, ոստիկանի, դատավորի, խոհարարի, շինարարի, փականագործի, զոդողի, մատուցողի, ֆերմերի, հյուսնի առաքելություն: Ուզում եմ հավատաք աշխարհը դեպի լավը փոխելու, մեր հայրենիքը դեպի լավը փոխելու ձեր առաքելությանը, ուզում եմ հավատաք նաեւ քաղաքացիական ձեր առաքելությանը, որովհետեւ շատ շուտով արդեն երկրի ապագայի մասին որոշումներ կայացնելու հնարավորություն եք ունենալու՝ որպես ընտրող: Ես հավատում եմ ձեզ եւ ուզում եմ, որ դուք էլ լիարժեք հավատաք ձեզ ու ձեր ապագային: Ցանկացած պարագայում այդ ապագայի երաշխիքը իմացությունն է, գիտելիքը, հմտությունը:

շարունակությունը՝ էջ 2

### Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը շրջանավարտներին

սկիզբը՝ էջ 1

Հարգարժան ուսուցիչներ, շնորհավորում եմ նաև ձեզ, ես գիտեմ, որ այսօր ձեզնից եւ ձեր աշակերտներից շատերի աչքերին արցունքներ են հայտնվելու: Այդ զգացմունքներից անդին պատասխանատվությունն է, մեր ու ձեր համատեղ պատասխանատվությունն այսօր դպրոցից հեռացող աշակերտների հետագա ճակատագրի համար: Մեր հայրենիքն անցնում է դժվար ժամանակներով, եւ ուզում եմ վերահաստատել, որ բոլոր այն խնդիրները, որ մենք ունենք, դրանց լուծումը նախ կրթության ոլորտում պիտի փնտրենք եւ գտնենք, որովհետեւ այդ բոլոր, առանց բացառության բոլոր պրոբլեմները սաղմնավորվել են հենց նախնական դպրոցական կամ հանրակրթության մակարդակում, երբեմն ու հաճախ բառիս բուն իմաստով դրանց բացակայության կամ կիսակատարության հետեւանքով: Այսօր մեր կառավարությունը լայնամասշտաբ բարեփոխումներ է իրականացնում հանրակրթության ոլորտում: Այդ բարեփոխումների առաջնությունն որակյալ կրթության հասանելիությունն է եւ ուսուցչի դերի բացառիկության ընդգծումը՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով եւ արդյունքներով: Կառավարության երեկվա միտումն այստարաբեցի, որ կրթության ոլորտի որակյալ բարեփոխումը մեր ամենակարեւոր անելիքն է, եւ մենք ավելի կարեւոր ոչինչ չունենք անելու: Սրանում ոչ մի չափազանցություն չկա:

Սիրելի՛ ուսուցիչներ, սիրելի՛ շրջանավարտներ, այսօր վերջին դասն է դպրոցում, բայց կյանքն ամեն օր մեզ դասեր է տալիս, եւ մեզ բոլորիս բարձր առաջադիմություն են մաղթում այդ ցկյան ուսումնառության ընթացքում հանուն մեր հայրենիքի, հանուն մեր սերունդների, հանուն մեր նահատակների:

### Կառավարության որոշմամբ

## Դպրոցներին կհատկացվի լրացուցիչ 50 միլիոն 360 հազար դրամ

ՀՀ կառավարության որոշմամբ հանրակրթական դպրոցներում կապիտալ ծախսեր իրականացնելու նպատակով «Հանրակրթության ծրագիր» ծրագրի շրջանակում դպրոցներին հատկացված սուբսիդիայից չօգտագործված գումարներից 50 միլիոն 360 հազար դրամի չափով փոխանցվել է պետական բյուջե՝ որպես «Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների (բացառությամբ փոխառու միջոցների) վերադարձից մուտքեր»:

Այդ գումարը կապիտալ դրամաշնորհների պայմանագրերով կհատկացվի դպրոցներին: Մասնավորապես՝

- 20.380.6 հազար դրամ՝ «Եղվարդի N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցի ջերմային ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար.

- 1.988.0 հազար դրամ՝ «Արարատի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.
- 558.0 հազար դրամ՝ «Ա. Երզնկյանի անվան Երեւանի N 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.
- 4.800.0 հազար դրամ՝ «Երեւանի Մ. Քաջունու անվան հ. 54 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ «ՆՇԱՆԱԿԵՏ-ՄՍ» վարժախանային ձեռքբերման համար.
- 450.0 հազար դրամ՝ «Մարտունու Ս. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.
- 140.0 հազար դրամ՝ «Երեւանի Մ. Գալշոյանի անվան հ. 148 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.

- 976.0 հազար դրամ՝ «Երեւանի Գ. Գյուլբենկյանի անվ. թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.
- 5.826.7 հազար դրամ՝ «Արմյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ին՝ կրթահամալիրի շենքի մասնակի նորոգման համար անհրաժեշտ նախագծամասշտակային փաստաթղթերի ձեռքբերման համար.
- 709.4 հազար դրամ՝ «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար.
- 14.532.0 հազար դրամ՝ «Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին՝ դպրոցին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար:

Հ. Հ.



### ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը շրջանավարտներին

Սիրելի՛ շրջանավարտներ, Շնորհավորում եմ ձեզ՝ ձեր կյանքի արժանահիշատակ իրադարձություններից մեկի կապակցությամբ: Այսօր վերջին դասի դողանքները նոր ձեռքբերումների, հաջողությունների եւ մարտահրավերների շրջան են ազդարարում ձեր կյանքում:

Դուք եք մեր պետության գալիք հենասյուները եւ անկյունքարերը, ձեզ է վստահվելու մեր երկրի զարգացման հետագա ապահովումը, դուք եք լինելու Հայաստանի բարօրության երաշխիքը, ձեզնով են հպարտանալու ձեր ծնողները եւ ուսուցիչները, դուք եք նոր ավյուն եւ ուժ հաղորդելու մեր հազարամյա պատմության ընթացքին:

Ձինվելք համբերությամբ, ջանասիրությամբ եւ հավատով ձեր ուժերի նկատմամբ, որպեսզի արդարացնեք ձեր ծնողների եւ ուսուցիչների հույսերը, արժանի լինեք Հայաստանի Հանրապետության քաղաքացու կոչմանը:

Դուք եք մեր ապագան: Սիրելի՛ շրջանավարտներ, Ի սրտե շնորհավորում եմ ձեզ, ձեր ծնողներին եւ ուսուցիչներին: Մաղթում եմ ձեզ կանաչ ճանապարհի ձեր ապագա ուսանողական եւ աշխատանքային կյանքում: Թող իրականանան ձեր բոլոր նպատակները, թող հաջողությունն ուղեկցի ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում: Աստված պահպան բոլորիդ:

## Կրթության ոլորտում ներդրումներն ամենանպատակալիս են

ՀՀ կառավարության միտումն որոշում է կայացվել՝ կամավոր ատեստավորում անցած մանկավարժների դրույթաչափերի եւ հավելավճարների բարձրացման վերաբերյալ:

Հարցը զեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**: Նա նշել է, որ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույթաչափի եւ դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման համեմատողովի ձեւավորման կարգը հաստատելու մասին» թիվ 596-Ն որոշմամբ սահմանվել է, որ 2022 թվականի մայիսից 2021 թվականին կամավոր ատեստավորման արդյունքում 30-50 տոկոս հավելավճար ստացող 478 ուսուցչի նկատմամբ եւս կկիրառվի բարձրացված 200 հազար ՀՀ դրամ

շեմային դրույթաչափը: «Այս որոշմամբ հատկացնում ենք անհրաժեշտ գումարը, եւ վերոնշյալ 478 ուսուցիչներն առաջիկա օրերին կստանան մայիսի աշխատավարձը՝ նոր մեխանիզմով: Արդեն ունենք ուսուցիչներ, որոնց ընդհանուր վարձատրությունը կազմում է մինչեւ 450 հազար դրամ՝ ներառյալ հարկերը, իսկ շուրջ 400 հազար դրամ ցուցանիչի հասնում է ավելի քան 2 տասնյակ ուսուցիչների աշխատավարձը: Ի դեպ՝ հավելավճար ստացող 478 ուսուցիչից 130-ն ունի տարակարգ: Փաստացի, արդեն ունենք կոնկրետ դեպքեր, երբ մեխանիզմը գործում է, եւ բարձրացված վարձատրությունն իրականություն է», - նշել է նախարարի տեղակալը:

Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ մայիսի 13-ից մեկնարկել է ուսուցիչների կամավոր ատեստավորման հայտերի ընդունելությունը, որն իրականացվում է ինքնաշարժային կառավարմամբ: «Այս պահին արդեն ունենք ավելի քան 2600 դիմում, եւ կարծում եմ, որ վերջին օրերին դրանց հոսքը կավելանա», - ասել է նախարարի տեղակալը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ 5-12-րդ դասարաններում բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչները կարող են մասնակցել կամավոր ատեստավորմանը եւ հավելավճարի հնարավորություն ստանալ: «Մենք ունենք ռազմավարական որոշում. հանրակրթության ոլորտի բարեփոխումները մեզ համար բացարձակ առաջնահերթություն են: Մենք պետք է գումար չխնայենք այդ ոլորտի վրա, քանի որ կրթության ոլորտում պետական ներդրումներն ամենանպատակալիս են», - ասել է ՀՀ վարչապետը:

Հ. ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

## Ավելի քան 22 միլիոն դրամ՝ շախմատային միջազգային մրցաշարերի անցկացման համար

Շախմատային միջազգային վարկանիշային մրցաշարերի աջակցության ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության որոշմամբ «Երեւանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը կտրամադրվի պետական աջակցություն՝ 22.315.0 հազար դրամի չափով, որից 4539.5 հազար դրամ՝ առաջին կիսամյակում եւ 17775.5 հազար դրամ՝ 4-րդ եռամսյակում: Աջակցությունը տրամադրվում է 2022 թ. Երեւանում նախատեսվող երեք միջազգային մրցաշարերի կազմակերպման եւ անցկացման համար:

Անհրաժեշտ 22.315.0 հազար դրամը կտրամադրվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2022 թվականի ընդհանուր հատկացումների շրջանակում՝ պահուստային ֆոնդի միջոցով վերաբաշխում կատարելու արդյունքում:

«Ապագա տարիներ 2022» (Արսեն Եղիազարյանի անվան «Պատանի շախմատիստների միջազգային մրցաշարի կազմակերպում եւ անցկացում» հուշամրցաշար) պատանիների շախմատիստների միջազգային մրցաշարը կանցկացվի 2022 թ. հունիս-հուլիս ամիսներին: Մրցաշարին կմասնակցի 10 շախմատիստ, որից 6-ը՝ Հայաստանից, 4-ը՝ արտերկրից: Մրցանակային ֆոնդը կկազմի 2.550.0 հազար դրամ, մրցաշարի ընդհանուր ծախսը՝ 4.539.5 հազար դրամ:

«Երեւան օֆեն 2022» միջազգային մրցաշարը կանցկացվի 2022 թ. հոկտեմբերին, որին կմասնակցի շուրջ 14 երկրի ավելի քան 310 մասնակից: Մրցաշարի մրցանակային ֆոնդը կկազմի 14.000.0 հազար դրամ:

«Պատանիների շախմատիստների եւ շախմատային մարզիչների համար միջազգային մրցաշարը» կանցկացվի 2022 թ. դեկտեմբեր ամսին, որին կմասնակցեն 5 պատանի շախմատիստներ եւ 5 լավագույն շախմատային մարզիչներ՝ երկու շրջանով: Մրցանակային ֆոնդը կկազմի 3.350.0 հազար դրամ, մրցաշարի ընդհանուր ծախսը՝ 3.775.5 հազար դրամ:

Շախմատային միջազգային վարկանիշային մրցաշարերի աջակցության ծրագիրը կիրականացվի ՀՀ պետական բյուջեի աջակցությամբ եւ «Երեւանի շախմատի ֆեդերացիա» ՀԿ-ի միջոցներով:

Հեղինակ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ



### «Վերջին դաս»

## 85-րդ հոբելյանականը



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյան** այսօր աշխատանքային այցով Վանաձորում է:

Փոխնախարար Կարեն Թռչունյանը եւ ԿԳՄՍՆ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ **Լուսինե Գրիգորյանը** ներկա են եղել Վանաձորի Վահան Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոցի «Վերջին դասի» տոնական միջոցառմանը: Այն ավագ դպրոցի համար 85-րդ հոբելյանական «Վերջին դասն» էր:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ Կարեն Թռչունյանը հաջողություններ է մաղթել շրջանավարտներին. «Այս նոր կյանքի ճանապարհին ձեզ հաջողություններ ու հաղթանակներ են մաղթում: Վստահ եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կյանքում կգտնի իր արժանի տեղը եւ պիտանի գավակ կլինի մեր հայրենիքի համար»:

## «Վստահ եմ՝ բազում առիթներ ենք ունենալու՝ հպարտանալու ձեր հաջողություններով»

Հունիսի 3-ին շուրջ 21 հազար շրջանավարտ նշեց «Վերջին դասը» հրաժեշտ տալով դպրոցին:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյան** այցելել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռակետային վարժարան շնորհավորելու շրջանավարտներին եւ ներկա գտնվելու ավարտական միջոցառմանը: «Վերջին դասի» արարողությանը ներկա է եղել նաեւ ՀԳՄՅ ռեկտոր **Սրբուհի Գեորգյանը**:

Նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** քերտորեն շնորհավորել է շրջանավարտներին տոնական օրվա եւ կյանքի նոր փուլի մեկնարկի կապակցությամբ. «Այս օրվանից հետո սկսվում է ձեր կյանքի կարելու որոշումներ ընդունելու փուլը: Վստահ եմ՝ նախորդ տարիներին ձեր ուսուցիչների օգնությամբ ստացել եք բոլոր նախադրյալները կայացնելու պատասխանատու, գիտակցված որոշումներ, դառնալու լավագույն մասնագետը եւ քաղաքացին»:

Փոխնախարարը կոչ է արել չվախենալ սխալներից եւ այսօրվա նույն թեթևությամբ ու ոգևորությամբ հաղթահարել կյանքի բոլոր փուլերը:

«Մանկավարժական համալսարանին կից վարժարանի շրջանավարտ լինելը լրացուցիչ պատասխանատվություն է. հույս ունեմ, որ ձեր շարքերում կան ապագա ուսուցիչներ», - ասել է նախարարի տեղակալը շնորհակալություն հայտնելով



նաեւ ուսուցիչներին՝ կարելու եւ պատասխանատու գործի համար:

«Վստահ եմ՝ բազում առիթներ ենք ունենալու՝ հպարտանալու ձեր հաջողություններով», - նշել է **Ժաննա Անդրեասյանը** եւ բոլոր շրջանավարտներին մաղթել բազում հաջողություններ:

Հունիսի 7-ից մեկնարկել են 2021-2022 ուստարվա միասնական քննությունները: Այս կապակցությամբ փոխնախարարը վստահություն է հայտնել, որ շրջանավարտները, որոնք բուհ ընդունվելու դիմում-հայտ են ներկայացրել, կգրանցեն լավագույն ցուցանիշները, ինչը թույլ կտա գնալ նպատակների իրագործման ճանապարհով:

Շրջանավարտներին շնորհավորել եւ բարեմաղթել են նաեւ ՀԳՄՅ ռեկտոր **Սրբուհի Գեորգյանը** եւ վարժարանի տնօրեն **Նաիրա**

### Սաֆարյանը:

Ռեկտոր **Սրբուհի Գեորգյան** ընդգծել է կրթօջախը կյանք է ճանապարհում հեթական պայծառ սերնդին՝ համոզված լինելով, որ նախադրյալները, որոնք տրվել են նրանց, որակապես բարձր ուղեցիչ են լինելու պետության նոր ձեռքբերումների համար:

Նույն համատեքստում վարժարանի տնօրեն **Նաիրա Սաֆարյան** ընդգծել է. «Դուք ձեր աշխատանքով եւ ներդրումով մեր երկրի հզորացման եւ ամրապնդման գործի հուսալի եւ ակտիվ մասնակիցն եք դառնալու: Շարունակեք հարստացնել ձեր գիտելիքը եւ դարձեք ՀՀ իրավատեր քաղաքացիներ: Մաղթում եմ խաղաղ երկիրը եւ նոր ձեռքբերումներ»:

Ի դեպ, ՀԳՄՅ հեռակետային վարժարան կատարած այցը կրում էր խորհրդանշական բնույթ. այս տարի Մանկավարժական համալսարանը նշում է հիմնադրման 100-ամյակը, իսկ 2021 թ.-ից աշակերտները հաճախում են վարժարանի՝ արդեն իսկ հիմնանորոգված շենք:

Կյանքի շրջադարձային փուլում հուզված էին նաեւ աշակերտները: Նրանք եւս միմյանց շնորհավորել են ու բարեմաղթել՝ հաջողությամբ հանձնել բոլոր քննությունները, հասնել նպատակներին, հաղթահարել խոչընդոտները եւ երբեք չհիասթափվել: Նրանցից ոմանք ընտրել են իրավաբանի, որոշները՝ լեզվաբանի, մանկավարժի եւ այլ մասնագիտություններ:

Շրջանավարտները նաեւ նշել են, որ կարոտով եւ նվիրումով կհիշեն հարազատ կրթօջախը՝ միշտ կիրառելով ստացած գիտելիքն ու հմտությունները:

## Նոր սերունդ

սկիզբը՝ էջ 1

**Քննություն:** Յուրաքանչյուր սերունդ ունի իր ասելիքն ու միայն իրեն վերապահված առաքելությունը, որ իր համար սահմանված չափով դառնում է գործ, մնայուն արժեք...

Յուրաքանչյուր սերունդ իր մուտքն աշխարհի սկսում է քննությամբ՝ ուղղակի, թե անուղղակի: Քննությունները լինում են տարբեր, լայն առումով՝ քննություն է յուրաքանչյուր արարք:



Երեկ մեկնարկեցին միասնական քննությունները: Նոր սերունդի առաջին լուրջ փորձությունը՝ գործունեության ասպարեզ իջնելուց առաջ: Բայց նաեւ՝ փորձություն բուրիս համար. ծնողների, ուսուցիչների, դպրոցի, բուհի, կրթության համակարգի, երկրի՝ քննություն:

Տա Աստված, որ այն հանձնենք պատվով:

**Ընտրություն:** Դպրոց գնում ենք **ակամա**, երբ հասնում ենք որոշակի տարիքի: Ըստ նախասիրության, թե ըստ հնարավորությունների՝ բուհ ընդունվում ենք՝ **ընտրությամբ**: Եվ այդ ընտրությամբ է պայմանավորվում մեր հետագա ողջ կյանքը:

Երկրի շրջանավարտների մեծ մասն այս օրերին փորձել է կատարել իր ճիշտ ընտրությունը: Ավարտվել է միասնական քննությունների դիմում-հայտերի ընդունումը, սակայն դեռ առջեւում են բուհերի **ընդունության մրցույթների ամփոփումները...**

...Ընտրության հնարավորություն տրվում է ոչ ամեն օր: Եվ ամենքին չէ, որ վիճակված է **ճիշտ կողմնորոշվել**: Իսկ հաջողությունը ուղեկցում է նրանց, անհատ, թե ժողովուրդ, ովքեր ճիշտ են կողմնորոշվում **աստեղային ճամփաբաժաններին**:

**Համալրում:** «Տվեք ինձ հենման կետ, եւ ես կշրջեմ աշխարհը» ... Արքիմեդի ուզածը, թեւ անսովոր, բայց ընդամենը մի լծակ էր... Մեր սերունդը համալրվեց **նոր շրջանավարտներով**, որոնց մեջ հաստատ կան Արքիմեդներ՝ Արքիմեդի ուզած լծակը ստեղծելու ունակությամբ ու **կամքով**: Մեր ուզածը մեր երկրի **հզորացումն է, անկախության ամրապնդումը եւ մեր ազգային խնդիրների լուծումը**: Մեզ ուրիշինը պետք չէ, մեզ մեր հավալըն է պետք, մեր մեծ հավալը...

Ու դեպի մեր արդար Ունեցվածքը մեր **Մեծ Վերադարձի** ճանապարհին Անկախության սերունդը ստացավ հեթական, հավատանք՝ հզոր, համալրումը... Արդ, բարի գալուստ դեպի մեծ կյանք, դեպի ուսում ու աշխատանք, դեպի **Գործ** ու **Հաղթանակ**:

Գ.Ս.



Աշխարհի հետ

Փոխադարձ վստահության ջերմ մթնոլորտում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը...

րը ոչ միայն սովորում են հունարեն, այլև հաղորդակից են դառնում հունական մշակույթին...



Մեկի դափնեկիրներ, բանաստեղծներ Յ. Սեֆերիսի և Օ. Էլիտի երկերից: Տեղի է ունեցել նաև գործնական քննարկում...

մար»,- ասել է նախարարի տեղակալը: Քննարկման ընթացքում կարծիքներ են փոխանակվել...

Մշակույթ

Բացվել է ՀՀ ժողովրդական արտիստներ

Երվանդ Ղազանջյանի և Գալյա Նովենցի միասնական հուշատախտակը

Հունիսի 2-ին ՀՀ ժողովրդական արտիստ, բեմադրիչ, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմբեդիայի...



առաջ, խոսք լսեց... Նա հիշողության մեջ մնաց ուժեղ, կենսասեր անծի կերպար, ինչպիսին որ կար կյանքում»:

Երվանդ Ղազանջյանի և Գալյա Նովենցի մասին հիշատակի խոսքով հանդես են եկել նրանց որդին Հայաստանի...

Նշենք, որ հուշատախտակի հեղինակներն են ճարտարապետ Վարդան Հարությունյանը և քանդակագործ Արմենակ Համբարձումյանը:

Մարզական

Հայ ծանրորդները 2 ոսկե, 3 արծաթե և 2 բրոնզե մեդալ են սկանել Եվրոպայի առաջնությունում

Հայաստանի ծանրամարտի հավաքականն Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում ավարտված Եվրոպայի առաջնությունում...

Եվրոպայի փոխչեմպիոն՝ ընդամենը 2 կգ զիջելով չեմպիոնի կոչումը նվաճած բուլղարացի Դավիթ Ֆիշերովին:

ե փոքր արծաթե մեդալ է նվաճել պոկուս վարժությունում: Նույն քաշային կարգում Հայաստանի մյուս ներկայացուցիչ Վարդան Մանուկյանը...

նալով մրցահարթակ, դարձյալ 5-րդ տեղն է գրավել՝ երկամարտում ցույց տալով 227 կգ արդյունք (105+122):

Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում Եվրոպայի չեմպիոն են հռչակվել 81 կգ քաշային Ռաֆայել Հարությունյանը՝ երկամարտի 354 կգ արդյունքով (160+194), և 96 կգ քաշային Դավիթ Հովհաննիսյանը...

Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալները նվաճել են Արսեն Մարտիրոսյանը (109 կգ, երկամարտ 371 կգ) և գերծանր քաշային Գոռ Մինասյանը (երկամարտ 446 կգ):

Հայաստանի կանանց հավաքականում ընդգրկված երեք մարզուհիները՝ Իզաբելլա Յալյանը, Տաթև Հակոբյանը և Հռիփսիմե խուրշուդյանը, ամմասն են մնացել մեդալներից:

Եվրոպայի առաջնության մրցավարական աշխատանքներում ընդգրկված է եղել միջազգային կարգի մրցավար, ԿԳՄՍՍ սպորտի բարձրագույն նվաճումների բաժնի գլխավոր մասնագետ Արայիկ Ալավերդյանը:

Երկամարտում արծաթե մեդալակիրներ են դարձել Արա Աղանյանը (96 կգ), Սամվել Գասպարյանը (102 կգ) և Վարազդատ Լալայանը (109+ կգ): Արա Աղանյանը երկամարտում ցույց է տվել 375 կգ արդյունք (170+205), իսկ Սամվել Գասպարյանը երկամարտի 390 կգ արդյունքով է դարձել

Հայաստանի մյուս ներկայացուցիչ, 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը երկամարտի 365 կգ (174+191) արդյունքով զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը: Նա նա-

Վերջին զանգ

Բարի երթ...

Արցախի հանրակրթական դպրոցներում մայիսի 27-ին հնչել է շրջանավարտներին դեպի մեծ կյանք առաջնորդող ավանդական «Վերջին զանգը»: Տարաբնույթ միջոցառումներով յուրաքանչյուր կրթօջախ յուրովի է նշանավորել օրվա խորհուրդը՝ վասն հայրենյաց նահատակների հիշատակի խնկարկմամբ ու շրջանավարտների հերթական սերնդին՝ հայրենիքի ապագան պահ տալու սրբազան երդումով: ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Գալստյանն իր շնորհավորական ուղերձում բարի երթ մաղթելով շրջանավարտներին՝ մասնավորապես նշել է. «Այսօր մեր հայրենիքի առջև ծառայած են բազմաթիվ մարտահրավերներ ու խնդիրներ, որոնց լուծումն ունի կարելու ու կենսական նշանակություն: Հայրենիքի հանդեպ ունեցած սիրով ու գիտելիքի զորությամբ ձեր սերունդը պետք է լծվի ազգի ու հայրենիքի զորացման ու բարգավաճման գործին»:



Հատկանշական է, որ վերջին զանգի հանդիսավոր արարողություն է կայացել նաև վերջին ամիսներին թշնամու նահաբեկ օղակում հայտնված Ասկերանի շրջանի խրամորթի գյուղի Գառնիկ Ավանեսյանի անվան միջնակարգ դպրոցում: Չնայած աշակերտների տարիանմանը՝ դպրոցի այս տարվա շրջանավարտները, ի հեծուկ բոլոր դժվարությունների, որոշել են հրաժեշտը կազմակերպել հարազատ կրթօջախում սիրելի մանկավարժների, նախարարու-

թյան ներկայացուցիչների, շրջվարչակազմի ղեկավարի, ծնողների հետ: Տունդարձի հույսն էր նրանց բոլորի խոսքում... Շրջանավարտներից շատերի համար օրերս կմեկնարկի բուհական ընդունելության քննաշրջանը: Սեզ հետ ունեցած զրույցում ԱՅ ԿԳՄՍ նախարարության ԳԹԿ-ի տնօրեն Յուրի Քարամյանը նշել է, որ այս տարի դիմորդների թիվն ավելացել է: 2021-22 ուստարում 923 շրջանավարտներից հայտագրվել է 710-ը: ԱրՊՀ է դիմել 358, Շուշիի

տեխնոլոգիական համալսարան 40, «Գրիգոր Նարեկացի» համալսարան 26, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան 37 շրջանավարտ: ՀՀ բուհերի նպատակային տեղի համար հայտագրվել է 133, ոչ նպատակային համար 116 դիմորդ: ԳԹԿ-ի տնօրենի խոսքով միասնական եւ ներբուհական քննությունները կընթանան երկու փուլով. միասնականը՝ հունիսի 7-24-ը, իսկ ներբուհականը՝ հունիսի 26-ից մինչև հուլիսի 7-ը ներառյալ: Այս տարի եւս առաջին հորիզոնակա-

նում են «Հայոց լեզու եւ գրականություն», «Իրավագիտություն» մասնագիտությունները, իսկ նախորդ տարվա համեմատ «Տնտեսագիտություն», «Տարրական մանկավարժություն եւ մեթոդիկա», «Ռուսաց լեզու» բաժինների եւ բնագիտական առարկաների մասով դիմորդների թիվը կրճատվել է:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Ք. Ստեփանակերտ  
մեր սեփական թղթակից

Մեկ Հայրենիք, մեկ կրթություն

Աշխատանքային քննարկում  
Արցախի Հանրապետության պատվիրակության հետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Անահիտ Գալստյանի գլխավորած պատվիրակության հետ: Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Ժաննա Անդրեասյանը, Արա Խզմալյանը, Արթուր Մարտիրոսյանը, Կարեն Գիլոյանը, Ալֆրեդ Քոչարյանը, Արցախի ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Լեռնիկ Հովհաննիսյանը, Հասմիկ Մինասյանը եւ Միքայել Համբարձումյանը: Ներկա են եղել նաև ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Միսակ Գաբրիելյանը, Արցախի Հանրապետության ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Հարությունյանը, ինչպես նաև Հայաստանի եւ Արցախի խորհրդարանների պատգամավորներ:



Մեկնազված բարեփոխումները, ինչպես նաև հանրակրթության ոլորտում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնք զուգահեռաբար պետք է տեղայնացվեն նաև Արցախում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Կրթության ռազմավարության նախագծի մշակումն արդեն ավարտական փուլում է. առաջիկայում այն կհաստատվի Կառավարության կողմից եւ կներկայացվի ՀՀ ԱԺ քննարկմանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի տեղեկացմամբ՝ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, կընդունվի նաև ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը՝ մինչև 2030 թվականի համար: Միջոցառումների ծրագրի հաստատմամբ՝ կանրագրվի կրթության ոլորտում ըստ տարիների ներդրումների կատարման պետության հանձնառությունը: Նախարար Ա. Գալստյանն իր հերթին նշել է, որ ընդունվելուց հետո Կրթության ռազմավարությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ սերտ համագործակցությամբ

կտեղայնացվի նաև Արցախում հաշվի առնելով Արցախի Հանրապետության կրթության եւ գիտության համակարգի խնդիրներն ու առանձնահատկությունները: «Հայաստանի եւ Արցախի նախարարությունները արդյունավետ համագործակցել են 2020 թվականի պատերազմի չափազանց դժվար օրերին եւ դրան հաջորդած ժամանակահատվածում, երբ Արցախի երեխաները գտնվում էին Հայաստանում, եւ առաջնային խնդիր էր նրանց կրթության շարունակականության ապահովումը: Մենք գործադրել ենք բոլոր ջանքերը, որպեսզի երեխաների կրթությունը հնարավորինս չընդհատվի», - փաստել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը՝ շեշտելով երկու նախարարությունների համագործակցության կարեւորությունը: Արցախի ԿԳՄՍ նախարարի առաջարկով ժամանա Անդրեասյանը ներկայացրել է նաև Հայաստանում ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը եւ դրա արդյունքում ուսուցչի աշխատավարձի բարձրացման համակարգը: Անդրադառնալով Արցախի պատմամ-

շակության ժառանգության պահպանության խնդրին՝ նշվել է, որ Ադրբեյջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում գտնվող շուրջ 2 հազար հայկական պատմամշակութային կոթողները եւ ավելի քան 20 հազար թանգարանային ցուցանմուշները գտնվում են ոչնչացման վտանգի առաջ: Դրանց պահպանության հարցն օրախնդիր է: Նշվել է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հայկական մշակութային ժառանգության պահպանության հարցը բարձրաձայնում է միջազգային կառույցների հետ տարբեր ձեւաչափերով հանդիպումներում: Խնդրի մտահոգությամբ պայմանավորված՝ Արցախի նախագահի հրամանագրով ստեղծվել է օկուպացված տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանության պետական խորհուրդ: Նշվել է նաև, որ Արցախի պատվիրակության գործադիր եւ օրենսդիր մարմինների պատասխանատուների աշխատանքային այցերը եւ քննարկումները ՀՀ համապատասխան գերատեսչությունների հետ շարունակական բնույթ են կրում:

Սյունիք

Կառավարության նիստում

Տիգրան Վանդունցը՝ Գործիսի պետական համալսարանի ռեկտոր

Տավուշի բոլոր դպրոցները կունենան անհրաժեշտ լաբորատոր ենթակառուցվածքներ



Գործիսի պետական համալսարանում մայիսի 30-ին տեղի է ունեցել խորհրդի նիստ, որի օրակարգում բուհի ռեկտորի ընտրության հարցն էր: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր 20 անդամները:

ԳԽԳ խորհրդի նախագահ Արտուշ Դուկասյանը նշել է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հայտարարած՝ ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին դիմել է չորս թեկնածու, սակայն Լեռնիկ Պետրոսյանի ներկայացրած դիմումի համաձայն՝ վերջինս չի մասնակցելու ընտրությանը:

Մյուս երեք թեկնածուները ներկայացրել են Գործիսի պետական համալսարանի զարգացման եւ բարեփոխման իրենց հայեցակարգերը: Խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել թեկնածուներին, որոնց հիմքում նախատեսվող բարեփոխումների իրականացման առավել առարկայական մոտեցումն էր, բուհը գիտահետազոտական միջավայր դարձնելու տեսլականը եւ այլն: Հարցերին հաջորդել են ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Դուկասյանի եւ խորհրդի անդամների ելույթները:

Ելույթներից հետո ԳԽԳ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Թ. Սարոբյանը հայտարարել է ինքնաբացարկ: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով ռեկտորի երկու թեկնածուներից՝ Հրայր Պետրոսյան (կողմ 1, դեմ 18), Տիգրան Վանդունց (կողմ 17, դեմ 2), բոլորին դեմ 1, Գործիսի պետական համալսարանի ռեկտոր է ընտրվել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Վանդունցը:

ՀՀ կառավարության վերջին նիստում գործադիրը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության ու Համաշխարհային բանկի միջեւ «ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագիր. դրամաշնորհի թիվ TF0B2692» դրամաշնորհային համաձայնագրի թիվ 1 փոփոխության ստորագրման առաջարկությանը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժամնա Անդրեասյանը՝ նշելով, որ հանրակրթության պետական նոր չափորոշումն առանձնահատուկ շեշտադրում ունի ԲՏԾՄ առարկաների կրթության որակի բարձրացումը, որի շրջանակում ներկայումս Տավուշի մարզի դպրոցներում փորձարկվում են վերանայված առարկայական չափորոշիչները: Փոխնախարարը կարեւորել է, որ բոլոր դպրոցներն ապահովված լինեն նաեւ անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով եւ գույքով, որը թույլ կտա այդ առարկաների ուսուցումը դարձնել իրապես փորձարարական:

«Տավուշի մարզի դպրոցներին լաբորատոր սարքավորումների, պարագաների եւ նյութերով տրամադրման գործընթացի ամբողջական ապահովման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման գումարը կազմում է 1,4 միլիոն եվրո: Նշված գումարն ավելանում է «ԵՄ-ն հանուն նորարարության. գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի (ԳՏԾՄ) ոլորտներում կրթության բարելավումն դրամաշնորհային փորձնական ծրագրի դրամաշնորհային 2,6 միլիոն սկզբնական գումարին՝ ծրագրի ընդհանուր գումարը

դառնալով 4,1 միլիոն եվրո», - նշել է Ժամնա Անդրեասյանը՝ հավելելով, այս գումարն ամբողջությամբ ծածկում է Տավուշի բոլոր դպրոցների համար անհրաժեշտ լաբորատոր ենթակառուցվածքները՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» եւ ՏՀՏ առարկաների համար:

Ժամնա Անդրեասյանի հավաստմամբ՝ ներկայումս բոլոր աշխատանքներն ընթանում են մյուս մարզերում եւս դրանք ապահովելու համար: Նախարարի տեղակալը հիշեցրել է, որ հանրապետության բոլոր ավագ դպրոցներում գործում են շուրջ 330 լաբորատորիաներ, որոնք ակտիվորեն օգտագործվում են: Նա նաեւ փաստել է, որ լաբորատորիաները պահանջում են պահպանման ծախսեր, որը պլանավորվում է դպրոցների ֆինանսավորման բանաձեւում:

Ժամնա Անդրեասյանի հավաստեցրել է, որ Թունոյի հետ համագործակցությամբ մշակվել է վիրտուալ լաբորատոր միջավայր, որը կփորձարկվի, եւ մաթեմատիկայի ուղղությամբ եւս ակնկալվում է ունենալ եւս պարզունքներ, այդ թվում նաեւ՝ նախագծային աշխատանքի միջոցով ու փոխկապակցման մեթոդով դպրոցներում գործող ինժեներական լոբորատորիաների հետ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ հանրակրթության նոր չափորոշումն ինդիկ է դրված՝ բնագիտական առարկաների ուսուցումը դարձնել փորձարարական: «Այս խնդիրն առկա է մեր ողջ կրթական համակարգում. երեխաները պետք է առնչվեն նյութի եւ թեմայի հետ ու լաբորատոր

պայմաններում ուսումնառություն եւ փորձեր իրականացնելու հնարավորություն ունենան: Վերջերս իմ այցելած մի քանի դպրոցներում գործող լաբորատորիաներն իսկապես տպավորիչ էին եւ բոլորովին նոր կրթական միջավայր էին ձեւավորել, սակայն կարեւոր է նաեւ լաբորատոր նյութերի եւ դրանց շարունակականության ապահովման հարցը», - նշել է ՀՀ վարչապետը՝ վերահաստատելով, որ մինչեւ 2026 թվականը հանրապետության բոլոր 1400 դպրոցներում կստեղծվեն ժամանակակից բնագիտական եւ ինժեներական լաբորատորիաներ՝ եւս պետք է բարելավվել կրթության որակը:

Նշենք, որ դրամաշնորհային համաձայնագրի թիվ 1 փոփոխության համաձայնագրի նախագիծը ՀՀ պետական բյուջեի համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում: Քանի որ «ԵՄ-ն հանուն նորարարության. ԳՏԾՄ ոլորտներում կրթության բարելավում» դրամաշնորհային փորձնական ծրագիրը հանդիսանում է 2018 թվականի նոյեմբերի 29-ին եւ դեկտեմբերի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական միության միջեւ «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. կրթության բարելավում հատկապես գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության եւ մաթեմատիկայի ոլորտներում» ծրագրի մաս (երկրորդ բաղադրիչի ենթաբաղադրիչ), ուստի նշված ավելացումը հանդիսանում է վերաբաշխում ընդհանուր ծրագրի շրջանակում:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախադպրոցական

Վերապատրաստող կազմակերպության ընտրության եւ վերապատրաստման կարգ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների եւ մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության եւ վերապատրաստման կարգի նախագիծը:

Նախադպրոցական կրթության բովանդակային վերանայման համատեքստում իրավական ակտի ընդունումը հիմք կհանդիսանա առկա ներուժի զարգացման համար եւ հնարավորություն կստեղծի մանկավարժներին հաղորդակից դարձնելու ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին:

Բացի դրանից՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում կբարձրանա մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշը, որը շարունակական ազդեցություն կունենա տարրական դասարաններում սովորողների կրթական արդյունքի վրա:

Համաձայն նախագծի՝ վերապատրաստման դասընթացն իրականացվում է ԿԳՄՍ նախարարության սահմանած ժամկետում՝ առկա կամ հեռավար եղանակով: Համայնքային եւ պետական ուսումնական հաստատության տնօրենների եւ մանկավարժական աշխատողների վերապատրաստումներն իրականացվում են պետա-

կան միջոցների հաշվին: Ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենները եւ մանկավարժական աշխատողները կարող են մասնակցել վերապատրաստմանը՝ հիմնադրի ֆինանսական միջոցների հաշվին:

Տնօրենի վերապատրաստումը պարտադիր է եւ անցկացվում է ԿԳՄՍ նախարարի հաստատած ժամանակացույցով նախատեսված ժամկետին համապատասխան: Նախարարի հրամանով հաստատվում եւ նախարարության պաշտոնական կայքում հրապարակվում են տվյալ ուստարում վերապատրաստումների ժամանակացույցը եւ վերապատրաստող կազմակերպությունների ցանկը:

Տնօրենների վերապատրաստման մոդուլները մշակում է վերապատրաստող կազմակերպությունը՝ վերապատրաստման դասընթացի չափորոշիչի եւ ծրագրի հիման վրա ու ներկայացնում է նախարարություն հաստատման: Վերապատրաստման դասընթացի վկայական ստանում է ընդհանուր ժամաքանակի առնվազն 80%-ին մասնակցած եւ չափորոշիչն ու ծրագրին համապատասխան ամփոփիչ աշխատանք հանձնած տնօրենը:

Մանկավարժական աշխատողին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների եւ վերապատրաստման ամբողջ ծրագրի կամ նրա առանձին բաժիններ

րի հիման վրա կազմված դասընթացների ընտրությունն իրականացնում եւ դրանց գործունեությունը 3 տարի ժամկետով երաշխավորում է նախարարությունը՝ գնահատման արդյունքների հիման վրա: Կազմակերպությունը կարող է երաշխավորվել վերապատրաստման ամբողջական ծրագրի կամ դրա որեւէ բաժնի մասով:

Ցանկում կարող են ընդգրկվել իրավաբանական անձի կարգավիճակ եւ պետական գրանցում ունեցող ՀՀ պետական եւ ոչ պետական ուսումնական հաստատությունները՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններ, հանրակրթական դպրոցներ, միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ, գիտական կազմակերպություններ, ինչպես նաեւ կրթության ոլորտում իրենց կանոնադրությամբ ամրագրված վերապատրաստումների իրավունք եւ փորձ ունեցող հիմնադրամներ, ընկերություններ, հասարակական, միջազգային, առետրային եւ ոչ առետրային կազմակերպություններ:

Ցանկի ձեւավորման կամ համալրման նպատակով նախարարությունը տարեկան առնվազն մեկ անգամ հայտարարում է մրցույթ: Կազմակերպությունն իր գործունեությունը պետք է իրականացնի նախարարի սահմանած՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական

աշխատողին վերապատրաստման չափորոշիչ, ծրագրին եւ կազմակերպության կողմից մշակված վերապատրաստման թեմատիկ պլանին համապատասխան:

Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի վերապատրաստումը պարտադիր է եւ անցկացվում է տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով նախատեսված ժամկետին համապատասխան՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ: Համատեղությամբ աշխատող մանկավարժական աշխատողը վերապատրաստման ներկայացվում է հիմնական աշխատավայրից:

Ուսումնական հաստատությունը իրապարակված ցանկից ընտրում է վերապատրաստող կազմակերպություն՝ պայմանագիր կնքելու համար: Վերապատրաստման դասընթացի առնվազն երկու երրորդին մասնակցած եւ առնվազն 9 միավոր հավաքած մանկավարժական աշխատողին դասընթացի ավարտից հետո տրվում է վկայական 5 տարի ժամկետով:


Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ հունիսի 18-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հիշում եմ եւ պահանջում

«Հայկական վարժարանների հետքերով. ուսյալ ազգի վկայագրերը»

ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Գիտության կոմիտեի աջակցությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում բացվել է «Հայկական վարժարանների հետքերով. ուսյալ ազգի վկայագրերը» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը:



Ցուցադրության նպատակն է մեկնարկա հեռավորությունից վեր հանել եւ ներկայացնել Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում գործող շուրջ 2000 հայկական կրթօջախների բեղուն գործունեությունը, որն ընդհատվել է Հայոց ցեղասպանության հետևանքով:

Տասնվեց խորագրային պանելից կազմված երկլեզու (հայերեն եւ անգլերեն) ժամանակավոր ցուցադրության մեջ ներկայացված են շուրջ երեսուն բնօրինակ ավարտական վկայականներ, լուսանկարներ, դասագրքեր, դպրոցական պարագաներ, որոնք ձեռք են բերվել ինչպես հայաստանյան, այնպես էլ սփյուռքում գործող տարբեր հաստատությունների արխիվներից, թանգարաններից, գրադարաններից, ինչպես նաեւ մասնավոր հավաքածուներից:

Ներկայացված բնօրինակ վկայականներում կարելի է տեսնել եւ զբաղեցնում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտու-

տի ֆոնդերում պահվող մեկ տասնյակից ավելի վկայագրերը, ինչպես նաեւ ուղեկցող փաստագրական հարուստ նյութը, որոնք փաստացի վկայություններ են Օսմանյան կայսրության հայկական վարժարանների երբեմնի գոյության:

Ցուցահանդեսում իրենց վկայագրերով տեղ են գտել արեւմտահայ այնպիսի հայտնի կրթօջախներ, ինչպիսիք են Կարինի (Էրզրում) «Սանասարեան» (1881-1915 թթ.), Վանի «Երամեան» (1878-1915 թթ.), Վասպուրականի կեդրոնական/կենտրոնական (1881 թ.), Խարբերդի Ազգային կեդրոնական/կենտրո-

նական կամ Թվկատինցու (1887-1915 թթ.), Սեբաստիայի «Արամեան» (1895-1914 թթ.), Այնթապի ազգային «Հայկանուշեան» (1877-1915 թթ.), Կեսարիայի «Կյունշեան» (1826-1915 թթ.) եւ այլ վարժարաններ:

Առանձին բաժին է նվիրված Կ.Պոլսի հայկական վարժարաններին, որտեղ ուսանել են Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած արեւմտահայ հայտնի մտավորականներ: Ավարտական վկայականներից մի քանիսը պատկանում են արեւմտահայ հայտնի մտավորականներ Ռուբեն Սեւակին, Դանիել Վարուժանին, Միսաք Մեծարեւցին (Մեծատուրյան), Թադեոս Մանկասարյանին, Ռաֆայել Շիշմանյանին: Առանձին բաժնով ներկայացված են նաեւ կայսրության միսիոներական դպրոցները՝ «Արմենիա» (հետագայում «Եփրատ») քոլեջը (1878-1915 թթ.) Խարբերդում, Այնթապի, Ադաբազարի «Հայուհեաց» բարձրագույն (1885-1915 թթ.) վարժարանը, Տարսուհի Սուրբ Պողոս ինստիտուտը (1888-1915 թթ.), Պարտիզակի բարձրագույն վարժարանը, Սեբաստիայի ուսուցչական ամերիկյան դպրոցը՝ «Normal School»-ը (1880-1915 թթ.) եւ ուսուցչական քոլեջը («Teachers' College», 1912-1915):

Ցուցադրությունը գործելու է մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 10-ը:

Աշխարհի հետ

Ամփոփվել է «Ապագայի ծիլեր» ծրագիրը



Կայացել է «Ապագայի ծիլեր» ծրագրի փակման առաջն արարողությունը՝ պայմանավորված ՔՈՎԻԴ 19 համաճարակի սահմանափակումներով: Միջոցառման մասնակիցներին ողջունել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը՝ կարելուրելով թվայնացման գործընթացը կրթական համակարգում եւ, առհասարակ, համրային կյանքի տարբեր ոլորտներում:

«Հայաստանի կրթական համակարգում ներկայումս ակտիվ ներդրվում են թվայնացման գործիքներ՝ ինչպես համավարակի դիմակայման, այնպես էլ որակյալ կրթության մատչելիության ապահովման նպատակով: Մենք ունենք թվայնացման ոլորտի մասնագետներ ոչ միայն կրթության, այլ մեր երկրի հանրային կյանքի տարբեր ոլորտներում, որը նպաստում է մասնակցային եւ թափանցիկ ընթացակարգերի կիրառմանը: Լիահույս եմ, որ դուք կհամալրեք մասնագետների այն բազան, որը կօգնի մեր պետությանը այդ կարելուրագույն խնդիրները լուծելու ճանապարհին», - փաստել է նախարարի տեղակալը:

«Հուլիսի տեքնոլոջիս Արմենիա» ընկերության տնօրեն Զեն Լիանգի խոսքով՝ ծրագիրը հնարավորություն է տվել ընդլայնել մասնակիցների գիտելիքներն ու հմտությունները տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում:

«Սա հատկապես կարելու է այսօր՝ համաշխարհային եւ դիմամիկ տնտեսության հիպերկապված աշխարհում, որը ենթարկվում է մշտական փոփոխությունների եւ մարտահրավերների: Համոզված եմ, որ այն սերմերը, որոնք ցանկեցին, սպազայում առատ բերք կբերեն ձեզ, ինչպես նաեւ Հայաստանի եւ Հիմաստանի միջեւ հարաբերություններին: Իսկ սպազան երաշխավորված է, քանի որ յուրաքանչյուր պտուղ սերմ է, որը պետք է ցանել սպազայի համար», - նշել է նա:

Ծրագրի մասնակիցներին ողջունել են նաեւ «Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ տնօրեն, ՀՊՏՀ «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» ծրագրի ղեկավար Քրիստինե Գյոնջյանը եւ «Արփինետ» ընկերության գործադան գծով տնօրեն Լիլիթ Բոդյանը:

Որպես առաջատար ՏՀՏ կազմակերպություն «Հուլիսի տեքնոլոջիս Արմենիա» ընկերությունը ցուցաբերում է հասարակական պատասխանատվություն եւ նպատակ ունի զարգացնել ՏՀՏ տաղանդներ Հայաստանի համար: «Ապագայի ծիլեր» ծրագիրը հիմնակի հարթակ հայ ուսանողների համար՝ հասնելու ժամանակակից տեխնոլոգիական ձեռքբերումների, ստանալու լրացուցիչ գիտելիքներ, ինչպես նաեւ ստեղծելու մշակութային կամուրջ Հայաստանի եւ Հիմաստանի միջեւ:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սերնք

Հայագիտության 7-րդ բաց երկրամասային օլիմպիադան

Կրասնոդարում անցկացվեց Հայագիտության 7-րդ բաց երկրամասային օլիմպիադան: Այս միջոցառումն ավանդաբար անցկացվում է Կրասնոդարի երկրամասի «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության երկրամասային մասնաճյուղի կողմից եւ ենթադրում է մասնակիցների գիտելիքների ստուգում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հայ մշակույթը, գրականությունը, պատմությունը, կրոնը, տոները, դիցաբանությունը եւ այլն:

կում, որի հետեւանքով չեն իրագործվում նման իրաշալի ծրագրեր: Բայց եկեք հուսանք ու հավատանք, որ կգա օրը, եւ հայրենիքում ամեն ինչ կկարգավորվի, մեր սաները կրկին հնարավորություն կունենան իրենց ուժերը հայրենիքում փորձելու»՝ ողջունելի խոսքում նշեց օլիմպիադայի կազմակերպիչ, ՌՀՄ Կրասնոդարի երկրամասի կրթության բաժնի պետ Կարինե Շախյանը:

Օլիմպիադայի հաղթողներին շնորհվեցին I, II եւ III աստիճանի դիպլոմներ եւ խրախուսական մրցանակներ: Մրցանակները հաղթողներին հանձնեցին Կրասնոդարի ՌՀՄ ՀԿ երկրամասային մասնաճյուղի նախագահ Կամո Հայրապետյանը, Կրասնոդարի երկրամասի ազգերի մշակույթի կենտրոնի նախագահ Վասիլի Չամբան եւ Կրասնոդարի ՌՀՄ երկրամասային բաժանմունքի կրթության բաժնի պետ՝ Կարինե Շախյանը:

«Ազգային կրթությունը Ռուսաստանի հայերի միության տարածաշրջանային եւ տեղական մասնաճյուղերի աշխատանքի հիմնական ուղղություններից է: Ուստի Հայագիտական օլիմպիադան ցույց տվեց ոչ միայն ուսուցիչների աշխատանքի եւ աշակերտների աշխատասիրության արդյունքները, այլեւ զնահատական տվեց մեզ՝ հայ համայնքների ղեկավարներին», - իր ամփոփիչ խոսքում ասաց Կամո Հայրապետյանը: Կուբանի հայկական սփյուռքի ղեկա-

վարն ընդօգեց, որ հայ ժողովրդի լեզուն, պատմությունն ու մշակույթը հանդիսանում են հայ համայնքի զարգացման եւ հզորացման հիմքը թե՛ Լոս Անջելեսում, թե՛ Մոսկվայում եւ թե՛ Կրասնոդարում: «Ուզում եմ շնորհակալություն հայտնել ոչ միայն օլիմպիադայի մասնակիցներին, այլեւ այն ուսուցիչներին, ովքեր տեղում իրենց ամենօրյա աշխատանքով օգնում են հայերին պահպանել իրենց հայեցողությունը՝ գտնվելով պատմական հայրենիքից՝ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու», - նշեց նա:

Օլիմպիադան անցավ ջերմ մթնոլորտում: «Սա օլիմպիդա չէր, սա յուրօրինակ տոն էր թե՛ ուսուցիչների, թե՛ ակերտների համար»՝ ասաց Կուբանի մեկ քաղաքի հայոց լեզվի ուսուցչուհի Էլեն Գեուրգյանը:

Դոնի Ռոստովի ուսուցիչների եւ աշակերտների ոգեւորությունը շատ պարտավորեցնող էր: Օլիմպիադայի ավարտին Կրասնոդարի քաղաքային համայնքի պարի, երգի եւ հայերենի ուսուցման աշակերտների եւ Արմավիր քաղաքի «Կոմիտաս» պարային համույթի մասնակցությամբ տեղի ունեցավ զեղեցիկ համերգային ծրագիր՝ «Երագի երկիր՝ Հայաստան» խորագրով:

Օլիմպիադայի բոլոր մասնակիցները վերադարձան տուն վառ տպավորություններով եւ մեծ ցանկությամբ կրկին մասնակցելու հաջորդ օլիմպիադային:



Փոճի՛ր մտապահել

սկիզբը՝ նախորդ համարում

154) Նյութ

«Թող ապրեն նրա շնորհներն անեղծ,
Ինչպես վարդերը՝ սաթի մեջ դրված,
Այլ, նարնջագույն,
հանց մի նյութ ու գույն՝
ժամանակից զերծ»:

Էգրա Փաունդ

Այն ամենը, ինչ կա շրջապատում, նյութ է: Այն կառուցված է ատոմներից, որոնք կազմում են ավելի մեծ ու համալիր միացություններ, ինչպիսիք են, օրինակ, մոլեկուլները եւ բջիջները, որոնցից կառուցված են կենդանի էակները: Մոլեկուլներն իրենք ատոմների հավաքածուներ են, որոնք էլ իրենց բաղադրիչներն ունեն պրոտոններ, նեյտրոններ, էլեկտրոններ: Սա էլ դեռ վերջը չէ, քանի որ դրանք էլ իրենց հերթին պարունակում են ավելի մանր մասնիկներ:

Մարդ էակը, թվում է, պիտի մարմին է, բայց իրականում մի պարկ է լցունված հեղուկներով ու գազերով: Այնտեղ գերակշռում են չորս տեսակի ատոմներ՝ թթվածին, ածխածին, ջրածին եւ ազոտ: Սակայն աշխարհաստեղծ գործի համար ընդհանուր առմամբ 100 տեսակի ատոմներ են հարկավոր: Այդ առյուտիկներից էլ կերտված է ցանկացած բան:

Կենդանի եւ անկենդան նյութերն իրենց կարեւոր առանձնահատկություններն ունեն: Կենդանի նյութերը մշտապես ինքնաորոգվում են, իսկ անկենդանները միայն այն դեպքում են փոփոխվում, երբ արտաքին ուժն է ստիպում դա անել:


Կենդանի գոյացություններն աճում են եւ փոփոխվում միջավայրից ներծծելով էներգիա եւ նյութ: Դրանք սնուցվում են արեւի լույսով, որը զորացնում է բույսերի աճը դրանով իսկ ապահովելով կերի ստեղծումը կենդանիների համար:

Երկրի անկենդան նյութը հիմնականում քարակերտ է եւ պարունակում է տասնյակ քիմիական նյութեր: Դրանցով մարդը կազմակերպում է իր կյանքը:

Յուրաքանչյուր նյութ լավ է մի կիրառության համար եւ վատ մեկ այլին համար պայմանավորված իր հատկանիշներով: Նյութի ֆիզիկական հատկությունները ներառում են , թե որքան ուժեղ կամ ամուր է այն, ինչքան հեշտությամբ է նյութը այս կամ այն ձևն ընդունում եւ ինչպիսի ազդեցություն ունեն դրա վրա ջերմությունը, էլեկտրականությունը եւ լույսը: Նյութի քիմիական հատկությունների շարքին է դասվում այն, թե ինչպես է փոխվում այլ նյութերի՝ թթուների, հիմքերի կամ ջրի հետ փոխազդեցության պարագայում:

Անխզելի է նյութի եւ էներգիայի կապը: Էյնշտեյնն ապացուցել է, որ նյութի քիչ քանակն անգամ կարող է վերածվել մեծ էներգիայի: Այդ ընթացքն է, որ «աշխատեցնում է» Արեգակը՝ արտադրելով լույսի էներգիա, որի շնորհիվ երկրի վրա ապահովվում են կյանքի ձեւերը:

Գիտնականներն ուսումնասիրում են նյութերի ատոմային կառուցվածքը, էլ ավելի օգտակար, տվյալ գործի համար անհրաժեշտ հատկությունների նյութեր ստանալու նպատակով: Դիտարկեմք միայն գիտության մի բնագավառի՝ կենսաքիմիայի բերած նպաստը:



...Նկարում կոմպոզիցիոն նյութեր:

Բանաստեղծներն են հուշում

Մշակված տեխնոլոգիաներով մարդիկ ստանում են վիտամիններ ու հանքանյութեր: Դրանք քիմիական նյութերի խառնուրդներ են, որոնք անհրաժեշտ են մեր օրգանիզմին անխափան գործելու համար: Դեղորայքը քիմիական նյութերի զուգակցություն է, որն օգնում է օրգանիզմին վերականգնվել:

155) Թափանցիկ շղարշ

«Կապույտը հոգու աղոթքն է, քույր,
Կապույտը-թախիծ,
Կապույտը-կարոտ թափանցիկ,
մաքուր,
Ու հստակ, ու ջինջ»:

Եղիշե Չարենց



Վեներա մոլորակն Արեգակի կողմից մեզ ամենամոտ մոլորակն է, ու իր պայծառությամբ երկնալուստուն երրորդն է՝ մայր լուսատուից ու Լուսնից հետո: Այն ամենատաք մոլորակն է, որի պատճառը շատ թանձր մթնոլորտն ու դրանից բխող՝ ջերմոցային էֆեկտն է: Մթնոլորտի խտության պատճառով հնարավոր չէ մոլորակի վրայից տեսնել Արեգակը: Ամպերի հիմնական ծածկույթը գտնվում է 30-60 կմ բարձրության վրա: Դրանք թույլ չեն տալիս, որ Տիեզերքից երես Կեներայի մակերեսույթը: Ամպերն անհաղթահարելի խոչընդոտ են նույնիսկ անտեսանելի ինֆրակարմիր ճառագայթների համար: Բայց, այնուամենայնիվ, այդ շղարշը միանգամայն թափանցիկ է ռադիոալիքների համար:

Վեներան ուսումնասիրող միջմոլորակային տիեզերական սարքերը դեպի մոլորակ են ուղղել ռադիոճառագայթների մեղ փունջ, եւ, անընդհատ գրանցելով անդրադարձ ազդանշանները, կարողացել են, չամսալով բնության արգելքին, որոշել մակերեսույթի ռելիեֆը: Վեներայի ամպերը գիտության համար դարձան թափանցիկ...

Դիմանալով առեղծի ճնշմանը՝ գրեթե 500 մթնոլորտ, ու բարձր ջերմաստիճանին՝ 4500C, վայրէջք կատարած սարքերը ուսումնասիրել են Վեներայի մթնոլորտի քիմիական կազմը, գետնի կառուցվածքն ու կազմը եւ ռադիոճառագայթներով երկիր են ուղղել շրջակա լանդշաֆտի լուսանկարներ: Պարզվել է, որ Վեներայի մակերեսույթին կան լեռներ ու գոգավորություններ, լեռնաշղթաներ: Մոլորակի մակերեսույթին են գտնվում Չյունանուշի հարթավայրը եւ Բաբա-Յագայի կամիոնը: Հայտնաբերվել է շուրջ 1000 խառնարան, որոնք կարող են լինել երկնային մարմինների հետ բախման հետեւանք: Մոլորակի ամենաբարձր եւ ամենացածր կետերի տարբերությունը կազմում է 13 կմ: Ամենաբարձր լեռները մոլորակի մակերեսույթի միջին մակարդակից ունեն 11 կմ բարձրություն:

Հրաբխային գործունեության արդյունքում բազմաստիճան ժայռեր կան, ու այդ աստիճաններն էլ հավանաբար հրաբխային մոխրից ձեւավորված շերտեր են:

Լուսատուները նաեւ վկայում են հրաբխային գործունեության մասին. շրջանաձեւ

մեծաբեկոր քարերի կուտակումներից հրաբխային ռումբեր են կոչել: Այդպիսի ռումբերից մեկն իր ուրվագծերով շատ նման է... կենդանի արարածի: Նայելով դրա լուսանկարներին՝ ակամա մտաբերում են այն ֆանտաստիկ գաղափարը, որ Վեներայում կյանք կա, որի հիմքում՝ ոչ թե ածխածինն է, այլ կրեմնիումը: Կրեմնիումի միացությունները թթվածնի ու ջրածնի հետ դիմանում են ավելի բարձր ջերմաստիճանների, քան ածխածինը եւ երկրային օրգանական միացությունները:

Ինչքան շատ է մարդն ուզում Տիեզերքում ունենալ բանական եղբայրներ, թեկուզ եւ բոլորովին ուրիշ նյութից կառուցված: Ինչքան նրան չի հերիքում հենց այդ հայտնագործությունը:

... Նկարում՝ Վեներա մոլորակը:

156) Մեծ եղեռնի արձագանքները՝ օտար ավերից

«Արյան այն փոքր քանակությունը, որ հայր դեռես պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, երբեք չի մեռնի»:

Անատոլ Ֆրանս

«Քառասուն հազար մեռյալ-լուսամուտ-Ակնախոռոչներ անթիվ-անվերջ,
Դառը տընանքի բոժոժը հմուտ
Թաղված է այնտեղ՝ լեռների մեջ:
Անամոթաբար շիկնում արեւից,
Մերկ տներն են վեր մայրս անթաթ,
Միգամածում է երկինքը վերից
Որպես մուգ-կապույտ ժանտախտ»:

Օսիպ Մանդելշտամ (Շուշի քաղաքի 1920թ.-ի 30 հազար հայերի ջարդի կապակցությամբ)

«Մերք գենցողի, մերք Սոււմգայիթ,
Մերք որոտը երկրաշարժի.
Անվերջ արյուն եւ արյուն,
Եվ քո ճակատագրում
Ցավում է ամեն ինչ, երկիր? Նահիրի:
Բայց դու գտնում ես քո մեջ միշտ
Զգտում հացի ու երգի:
Եվ ես սիրում եմ քեզ վաղուց՝
Ի ցույց կյանքի հավատի»:

Սիխայիլ Դուդին

«Գիտնականների ու հրաբուխների երկիր»՝ Սերգեյ Գորոդեցկի

«Օ, դար իմ հանցավոր,
դեմքիս արյուն շարտիր.
Ծանրությունը՝ հսկա,
կռացել է հին չարքի վրա,
Եվ ողբում է այն
անաստված զոհերի վրա...»
Բորիս Չիչիբակին

«Դժվար էր մոռանալ Չմյունհայի ծովափը: Ինչ ասես չէր լողում նրա ջրերում: Կյանքումս առաջին անգամ ես այն օրի էի հասել, որ այդ ամենը տեսնում էի երազումս: Ծննդաբերող կանայք նույնքան արտապիտիկ էին, որքան մեռած երեխաներին գրկած կանայք...»

Էռնեստ Դեմինգուեյ

«Բոլոր լեռնահովիտները, բոլոր գետափերը լցված են թշվառության ծամբարներով. Տավրոսի ու Ամանոսի կիրճերով ձգվում է մի տեղահանված ժողովրդի, այդ հարյուր-հազարավոր տարաբախտների ահագին հեղեղը, որ հորձանք է տալիս լեռների ստորոտով, որպեսզի նվազելով ու նվազելով՝ անվերջանալի թափորներով գահավիժի հարթավայրը եւ ծծվելով՝ կորչի անապատում»:

Արմին Թեմֆիլ Վենգեր

«Նրանք խղճալի վտարանդիներ,
աննշան բեկոր՝
Դարերով խիզախ, այլեւ մարտիրոս
մի ժողովրդի.
Նրանք զավակներ՝ անվերջ ահաբեկ,
շղթայված մի մոր,
Մխրալի զոհեր մեծ, աշխարհապանծ
մի գոտեմարտի...»:

Պետր Յավորով

«Դա մի ամբողջ ժողովրդի՝ աշխարհում առաջին անգամ ծրագրված եւ գիտական հիմքի վրա կառուցված ֆիզիկական ոչնչացում էր՝ տոտալ եղեռն»:

Բոգդան Գեմբարսկի

... Նկարում՝ կադր Տավիանի եղբայրների «Արտույտների ագարակը»՝ Ֆիլմից: Ֆիլմում գործողությունները կատարվում են 1915թ.: Չանգվածային ջարդերի ժամանակ սպանվում են Ավագյանների ընտանիքի բոլոր տղամարդիկ, իսկ կանայք փոքրիկ Ավետիսի հետ (ուն հազգրել էին աղջկա շորեր) թուրքական բանակի զինվորների ուղեկցությամբ հազարավոր ուրիշների հետ բռնում են արտաքսման ճանապարհը: Ընտանիքի երիտասարդ մի աղջիկ՝ Նուրիկը, պատրաստ է ամեն ինչի՝ հանուն իր զարմիկների: Նա սիրահարված էր մի թուրք սպայի, ով երիտթուրքերի քաղաքական անդամ էր, իսկ տարագրության ճանապարհին նրան սիրահարվում է մի ուրիշ թուրք սպա...

Տավիանների շնորհիվ ծնվեց մի կերպար, որը դարձավ հայ կնոջ խիզախության եւ կանացիության մարմնավորումը: Ֆիլմում ցեղասպանության սարսափը հենց այնտեղ է, որ այն սպանում է նույնիսկ սիրո հայտնությունը:



Ֆիլմում խորհրդանշական «Կերպար» էլ կա. խնձորը: Այն հայտնվում է երկու անգամ: Առաջին անգամ փրկում է Նուրիկի կյանքը: Իսկ երկրորդ անգամ խլում է նրա կյանքը խուճապի մատնված փոքրիկի աղաղակի պատճառով: Այդպիսի տեսարանները բնորոշ էին Տավիանի եղբայրներին. ֆիլմի յուրաքանչյուր կադր է շնչում որպես գեղագիտական նրբաճաշակ պատկեր:

157) Հայկական համանվագ

«1915-Հայկական համանվագ»- այդպես անվանված պոեմում անգլիագիր բանաստեղծ Յովիաննես Փիլիկյանը շրջայի մեջ է ներկայացնում հայոց եղեռնը, յուրյ է տալիս, որ պատմության մեջ գործած ամեն չարիք իր հետագիծն է թողնում ժամանակի վրա, իսկ չարիքների հանդեպ հանդուժողականությունն ու անտարբերությունը բերում են նոր չարիքների սանձազերծում: Հայոց տառապանքը պոեմում բացվում է վավերագրերով, սեփական ապրումներով ու խոսքերով:

«Երկաթագիր պատմությունն այս մտերիմ հողերուն Աչքիս արցունք կը բերե...
Փառք ու մեռել շատ ունի երկիրն իմ հին, ալեւոր՝ որուն
ես թողն եմ վայրի,
Խոկումներով բեռնավոր,
երազներով օրորուն:

... Մեռելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի»:

Լեւոն Չավեն Սյուրմեյան

Հարունակությունը՝ էջ 9

Բանաստեղծներն են հուշում

սկիզբը՝ էջ 8

«Բայց ո՞վ պիտի բերե,
ո՞վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրե՞նդ
ափ մը մոխիր...»:
Սիամանթո

«Հիվանդ տերեւ մը տեսա
կանաչին մեջ դաշտերուն:
Ի՞նչ աղվոր էր գարունը,
փափուկ հովեն օրորուն,
Սիրուն խոտերը դաշտին,
ժաղիկներն ալ բյուր գույնով,
Կը խնդային լեռնայն
գաղջ արեւին տակ գինով»:
Ռուբեն Սեւակ

... «Պիտի մոռնանք մենք, զմեզ, մեր
Վիշտն ու վերքն առաջին,
Պիտի մոռնանք, այնպես չէ՞, երբ մեր
երկիրը դառնանք»:
Վահան Թեքեյան

«Թուրքերը, եպարքուէն մինչեւ գեղ-
ջուկ հովիւը, խորագույն հանդարտութե-
ամբ ընդունեցին բնաջնջման պատգա-
մը: Ատիկա հին դարերու բնագոյներու
հրաւեր մըն էր, իրենց համար շատ հա-
ծելի»:
Հակոբ Օշական

«Հայությունը կու լար ու կը մռնչեր
իմ մեջս...»:
Դանիել Վարուժան

«Նահանջ առանց երգի» «Նահան-
ջը, նահանջը հայերուն: Կոհվը սրբազան
բան է, ճակատամարտը երբեմն նույնիսկ
օգտակար, անոնցմէ ազգ մը դուրս կու-
գայ պարտուած կամ յաղթական, սա-
կայն երկու պարագային ալ դուրս կու-
գայ, բայց նահանջը հոգիներու գլխի
պտույտ տուող աս գառնիթափին վրայ-
սա նահանջը կը ջնջե, կը ծուլ», կ'անհե-
տացնե ամեն բան»:
Հահուն Հահուն

«Եվ պետք է խոսին էնքան լուրջ ու
զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինե-
լու ամենից մեծ վշտավորն ու ամենից
շատ վտանգվածը ժողովուրդների մեջ,
այլև էնքան հաստատուն ու բաց ճակա-
տով կարող է խոսել մի ժողովուրդ, որ
այրել է մարդկային լավագույն ձգ-
տումներով եւ ամեն ինչ տվել է ու կտա
ազատ կյանքի համար»:
Հովհաննես Թումանյան

«Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր-
կյանքը դարձնում նզովյալ՝ գեհեմ»:
Եղիշե Չարենց,
«Դանթեական առասպել»

«Լուսինն աստծո արցունքի նման
Սեւ նոճիների թարթիչից կախված,
Թողեցինք մի ողջ
անտառ-կախաղան՝
Ո՞վ կդիմանար դժոխքին այս մեծ...»:
Հովհաննես Շիրազ,
«Հայոց Դանթեական»

«Հող իմ կիսված՝ սիրտ չկիսվող,
Կբել եմ ես քո պարտքի տակ»:
Վահագն Դավթյան

«Գրիգոր Խանջյան, Հահան Նաթալի
եւ Պարույր Սեւակ: Սեւակն իր «Անլռե-
լի»-ով ու մի մարդու կերպարով ներկա-
յացրեց արհավիրքը: Գրիգոր Խանջյանի
«Կոմիտաս»-ն ամբողջացրեց «Անլ-
ռելի»-ն: Նաթալին էլ մեկ հայ թանգա-
րանում թողնողների կենդանի նեմե-
սիսն է»:
Աղասի Միքայելյան



... Նկարում Գրիգոր Խանջյան, Պա-
րույր Սեւակի «Անլռելի զանգակա-
տուն» պոեմի նկարազարդումներից
(խելագարված Կոմիտասի նկարը):

158) Հայոց վիշտը

«Հայոց վիշտը՝
Անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սեւ ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին»:
Հովհաննես Թումանյան

Հայոց Սեծ եղեռնը, ամրագրվելով նրա
պատմական հիշողությունում, մեծապես
արտացոլվել է նաեւ նրա զավակների ար-
վեստի ստեղծագործություններում:

Կերպարվեստ: Աշխարհով մեկ սփռ-
ված, օտար ափերում հանգրվանած, մա-
հից մազապուրծ, աղքատության ու թշվա-
ռության եզրին կանգնած հայ գաղթակա-
նության ծանր կացությունն է արտահայտ-
ված էդգար Շահինի մի շարք աշխատանք-
ներում: Ուշագրավ է «Ծերունի հայի դի-
մանկար» գրաֆիկ աշխատանքը: Ջարիու-
րելի սպանդի եւ ավերի մատնված հայրե-
նիքի կորուստը նկարչին դարձրել է մելա-
մաղձոտ, որն իր դրսեւորումն է ստացել
նույնիսկ նրա այն աշխատանքներում,
որոնք, թվում է, ոչ մի կապ չունեն հայ իրա-
կանության հետ:

Ուշագրավ է Արա Շիրազի «Որբեր»
քանդակը: Հայ ժողովրդի աղետալի վիճա-
կի արտահայտություն է նաեւ նրա «Անտու-
նի» բոլորաբանդակը. հեղինակը ազգային
արձանագործության հարուստ ավան-
դույթների ու ժամանակի պահանջներից
բխող նոր լուծումների նուրբ ներդաշնակ-
մամբ ստեղծել է դրամատիկ մի ստեղծա-
գործություն:

ճարտարապետություն: Ծիծեռնակա-
բերդի հուշահամալիրը (Ա. Թարխանյան, Ս.
Քարտաշյան): Բազալտով սալարկված
հրապարակում կառուցվել է անսամբ, որի
տարածական հորինվածքի գերիշխող ծա-
վալներն են Հիշատակի դահլիճը եւ Վե-
րածնդի կոթողը: Հիշատակի դահլիճը բա-
զալտե տասներկու թեքադիր մույթերով
պարփակված տարածություն է, կենտրո-
նում? Հավերժական կրակը: Մույթերը ստո-
րին մասերով միմյանց են մերժեցնում սան-
դուղքներով, որոնք բոլոր կողմերից իջնում
են դահլիճ, ուր Հավերժական կրակին խո-
նարհված «վշտագին» մույթերի շրջապա-
տը մեծապես համակում է հուզական ներ-
գործությամբ: Վերածնդի կոթողը վերսլաց
ու սրածայր բրգատիպ կառույց է:

Ցնցող էր, երբ Հոմի պապի այցելու-
թյան ժամանակ Հիշատակի դահլիճում
Շարլ Ազնավուրը կատարեց «Ավե Մարիա-
ն» (սեպտեմբերի 26, 2021թ):

Երաժշտություն: Որպես համաժողովու-
րդական վշտի ու ցասման արտահայտու-
թյուն է ընկալվում Ա. Խաչատրյանի 2-րդ
սիմֆոնիայի այն մասը, որն ստեղծված է
ֆիդայական թեմայով «Որսկան ախպեր»

ժողովրդական սրտառուչ երգի հիման
վրա:

Թատրոն: Պերճ Զեյթունցյանի ստեղ-
ծագործությունների հիման վրա տարբեր
թատրոններում բեմադրվել են երկու նշա-
նակալից գործեր՝ «Ոտքի, դատարանն է
գալիս» եւ «Սեծ լռություն»: Առաջինը հայ
վրիժառու Սողոմոն Թեփերյանի դատավա-
րությունն է, իսկ երկրորդը պատմում է Դ.
Վարուժանի եւ Կոմիտասի մտերմության
մասին:

Կինո: Անրի Վերնոյի (Աշոտ Մաղաքյան)
երկմասանոց «Մայրիկ» ֆիլմը: Այն պատ-
մում է 1921թ. Հայոց ցեղասպանության ժա-
մանակ Մարսել տեղափոխված հայ ընտա-
նիքի մասին: Վեցամյա երեխայի հիշողու-
թյունների միջոցով ներկայացվում է ընտա-
նիքի պատմությունը՝ պարուրված սիրով եւ
հոգատարությամբ: Ազատ Ջաքարյանը նա-
վահանգիստ է իջնում ծնողների ու երկու
մորաքույրների հետ: Նոր, հյուրընկալող
երկրում հաստատվելն ուղեկցվում է կո-
րուսյալ երկրի հիշողություններով, որոնք
մի ահեղի ողբերգություն ու հայրի կերպը
հաշված ժամերի ընթացքում հասանելի են
դարձնում նաեւ անտեղյակ հանդիսատե-
սին: Նշանավոր դերասաններ են արտիստ-
ները՝ Կլաուդիա Կարդինալե, Օմար Շա-
րիֆ, ուրիշներ, որոնք ստեղծել են վառ ու
զուգուր կերպարներ:

... «Մայրիկը մեռնում էր այնպես,
ինչպես ապրել էր՝ զուսպ, առանց որեւէ
մեկին նեղություն տալու, սպիտակ սա-
վանների մեջ պատկած, հեզիկ, մաքուր,
խաղաղ, մեն-մենակ մահվան դեմ, քանի
որ հիմա գիտես, որ մարդը մեռնում է մե-
նակ»:

«Արդեն գիտես, որ այլևս ոչ ոք ինձ
չի գզուշացնելու գիշերային զովից, ոչ
ոք այլևս ինձ չի մեկնելու այն չնչին բոր-
յա հազուստեղները, որ այնքան բարկաց-
նում էր ինձ... Եվ ահա խղճի խայթ եմ
զգում նրա չափազանց անհանգստու-
թյան դեմ իմ բարկության համար»:

«Ժամանակի հոսքի մեջ պարզ տես-
նում եմ, որ ես ու մայրիկը իրար սիրում
էինք ի ծնե, առանց միմյանց դա ստե-
լու... Իսկ մնացյալը դառնում էր ավե-
լորդ ենթավերնագիր»:

«Քնարեր այդ խաղալիքների փոխա-
րեն, որ հորինել են մեծերը փոքրիկների
համար, ես գերադասում էի իմ սուրբ ծա-
նապահների դեմքերը: Մայրիկ, Աննա եւ
Գայանե: Սիրո երրորդություն, իմ երեք
մայրերը, երեքն էլ շաղախված միեւնույն
սիրուց»:

«Մանկություն՝ մեծանալու անհազ ցան-
կությանը, պատանեկություն՝ աճող ծգտում-
ներով, որոնք կեղեքում են քեզ ու մի երեկո
առաջնորդում սիրելիներիդ հոգեվարքին,
որոնց ծերամալը չես նկատել, մինչդեռ
նրանց ամեն մի սպիտակած մազը կանխա-
զուշակում է մի գարունքի գերեզման»:

Ա. Վերնոյի «Մայրիկ» վիպակը նաեւ
գրական նշանակալից ստեղծագործու-
թյուն է:



159) Նվիրում

«Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
-Քեզի ընձա՛, իմ հայրենիք-
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...
-Քեզի ընձա՛, հին հայրենիք-
Եղեգնյա գրժով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ»:

Դ. Վարուժանի «Չոն»-ը հայրենիքի ան-
ցած ճանապարհի հանրագումարն է: Բա-
նաստեղծի երեւակայությունը ճախրում է
հեթանոս շրջանից մինչեւ ներկա դարերը:
Եղեգնյա գրչի երգած փառքը ներքող է հայ
պանդուխտներին, սուրի գոհերին եւ ծնող-
ներին: Դա նաեւ պայքարի կոչ է հանուն
հայրենյաց, որ խաղաղ լույսի ու ծուխի փո-
խարեն ընդվզումի բույն է արտաժայթքում:

Ուրեմն եւ նվիրումը անվերապահորեն
որել է բանի նպատակի, գաղափարի ծա-
ռայելն է, անձնագրի վարք ցուցաբերելը,
նվիրյալը վեհ գործի համար իր անձն
առաջարկած մարդը:

Մերը՝ որպես նվիրում, անշահախնդիր
հոգատար վերաբերմունքն է, երբ նման սի-
րո դիմաց ստացած միակ հատույցը՝ հոգա-
տարության հնարավորության համար ապ-
րած ուրախությունն է: Խելացի մարդկանց
համար՝ նաեւ այն բանի գիտակցումը, որ
հոգատարությունն իզուր չէ, որ այն անիրա-
ժեշտ է եւ տալիս է հիանալի արդյունքներ:

Այդպես են ծնողները սիրում իրենց երե-
խաներին. ոչ նրա համար, որ օր ծերության
վերջիններս ենցուկ կլինեն իրենց, այլ
որովհետեւ ուզում են իրենց կյանքի իմաս-
տը տեսնեն այդ երեխաների առողջության
ու երջանկության մեջ: Այդպես էլ երեխա-
ներն են սիրում իրենց ծնողներին, որովհե-
տեւ՝ «Մայր իմ անուշ ու անգին» (Եղիշե
Չարենց), «Մայրս՝ քայլող մո՛մ՝ մշտագթու-
թյան» (Հովհաննես Շիրազ):

...Խորհրդային մի մուլտֆիլմ կա՝ «Ես
քեզ ասող եմ նվիրում» (հեղինակներից
մեկը էլվիրա Ավագյանն է), որը 1976թ.
ստացել է պետական մրցանակ:

Մուլտֆիլմը չորս երգից է բաղկացած:
Առաջինի «իրադարձությունները» քարե
դարից են: Միայնակ, վայրի ու ազրեսիվ
տղամարդու կյանքը փոխվում է, երբ որսի
ժամանակ հանդիպում է կնոջը: Վերածն-
վում է նա, գեղեցկանում ու պոետիկ դառ-
նում: Նա երգ է նվիրում կնոջը. Միրելիս, ես
քեզ կտանեմ Տիեզերքի ամենածայրը, ես
կնվիրեմ քեզ այն աստղը բոցկլտուն: Հա-
վերժական լույսով նա կլուսավորի մեր ու-
ղին դեպի անսահման հեռուն»:

Անցնում է մի քանի հազարամյակ: Եղել
է արդեն անիվի գյուղը, գիրը: Դաժան կռ-
վում մարտիկը գերեզմարում է մի գեղեցկու-
հու եւ նետերի տարափի տակ առելան-
գում: Ու տղամարդը նորից քնքշանում է,
երգում իր հեռավոր նախնու խխորոց սրտի
երգած ճիշտ մույն երգը:

«Ես քեզ կնվիրեմ այն աստղը լուսե...»:
Ու էլի հազար տարի, մեռնե լույսերի ու
գերբարձր արագությունների դար: Պատա-
հաբար հանդիպող մի գույգ, ու նույն խոս-
տովանանքը սիրո՝ «Միրելիս, ես քեզ կտա-
նեմ Տիեզերքի ամենածայրը, ու...»:

Վերջապես՝ ապագայի դարաշրջան: Տի-
եզերական անհուն, աստղաթիռ, եւ մի այր
ու մի կին: Տղամարդն ավելի մեծ բան չունի
նվիրելու՝ քան հեռավոր աստղն ու նրա
անմար լույսը, չնայած՝ առօրյան, ինչպես
միշտ, անփոփոխ է ու պակաս բանաստեղ-
ծական:

Ինչո՞ւ է այդպես... Այդ ամենը մարդու
էության ու կերպի մեջ է, տեսլականի ու
առօրեականի, երազայինի ու իրականի
համադրման մեջ է, ի վերջո՝ դա կյանքն է իր
հակասություններով ու երազանքներով:
Բայց նվիրումը, երբ էլ լինի շատ նման հո-
գեվիճակ է՝ ինքնամոռացություն ու գորով,
երբ անհմար չի թվում ոչինչ:

Չարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Արդա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրականագիտական

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը

սկիզբը՝ նախորդ համարում

1918

1918, սկիզբ – Չարենց. «Այդ երգը հիշեցրեց ինձ մի այլ սգերգ, որ ես դժվար թե երբեք էմ մոռանալ: 18 թվականի սկզբին ես երգում էի: Ռուս զորքը հեռացել էր, քաղաքը մնացել էր վեց վիճակներին: Այդտեղ էր Անդրանիկը, որ... հայրուկի տարագն արդեն փոխել էր զորավարի փայլուն շքազգեստի: Թիկունքն ապահովելու նկատառումով նա ձերբակալել էր բոլոր թուրք տղամարդկանց, որոնցից մոտ 300 հոգու լցրել էին իմ բնակարանին կից գտնվող մի կիսավեր շինության 5-6 ընդարձակ սենյակները եւ դրել պահակներ: Եվ ահա մի անգամ կես գիշերին ինձ հանկարծ արթնացրին, դուրս բռնելու պես ինձ հասավ զարհուրելի սրտակտուր մի վայնասուն, որ գալիս էր կողքի բնակարանից: Սոնտոն, դառը, աղիողորմ մի նվոց էր դա, հուսահատության անլուր մի ոռնոց, որի միջից մերթ-մերթ լսվում էին «Ալ-լահ-յա-ալլահ» միակ հասկանալի բառերը: Չգիտեմ – ե՞րգ էր դա, թե՞ հուսահատ վայնասուն, բայց նա իմ վրա թողեց խորը, անջնջելի տպավորություն,- եւ այդ երգն էր ահա, որ 7 տարի հետո ես նորից հիշեցի Սուխոյ-Ֆանտան գյուղում՝ արիզուների ժողովարանից հասնող կրոնական «երգը» լսելիս» («Պրիզուների գյուղում», գրել է 1924-ին, ԵԺ, VI, էջ 120):

1918, փետրվար – Թիֆլիսում ավարտում է 1917-ի դեկտեմբերին երգում սկսած «Ազգային երգը (Պոեմ երգիծական եւ ողբերգական)» երկը: Գրված է երգում ունի հայոց դիմակայության տպավորություններով, որի անկումը վրա հասավ մարտի 12-ին:

Տպագրել է ԵԺ, II հատորում (1922):

Երգումի պաշտպանությունը դեկավարում էր զորավար Անդրանիկը, պարտության համար նա մեղադրում էր Չայոց ազգային խորհուրդին, որի նախագահը Ավետիս Ահարոնյանն էր: Վերջինս Գյուլիստան Անդրանիկին տեսնում է կեղեքումների մեջ՝ անձնատուր «...իր ծանր հոգեկան խռովքին, որ այնպես հաճախ բռնում էր նրան: Նա ընկճված էր, նորեն մաղձոտ, կատաղած աշխարհի դեմ, հայության դեմ: Ազգային խորհուրդն էլ կհարկե իր բաժինն ուներ նրա ցասումի մեջ: Ամեն կողմ տեսնում էր դավ, խարդավանք...» «Անդրանիկը», «Չարենցի», Բոստոն, 1927, թիվ 2, էջ 81-82):

Չարենցի պոեմում ազգային այս գործիչները գրական հերոսների իրական նախատիպեր են: Ահարոնյանը՝ Անոյի, Անդրանիկ զորավարը՝ Լեգեոնի... Պահպանվել է նաև նրանց քաղաքական ներհակությունը:

«...պոեմի որոշ հատվածներում Չարենցը միանգամայն մտածված ձևով օգտագործում է թուրքական «Դեպի անհունը» պոեմի անսովոր հնարքներն ու արտահայտությունները, թեթևակի վերափոխելով դրանք: Երկու պոեմներն էլ սկսվում են երազի նկարագրությամբ, թեև այդ երազների բովանդակությունը մի-

անգամայն տարբեր է... <...>: Բայց որ «Ազգային երազը» գրելիս բանաստեղծը գիտակցված ձևով հետեւել է թուրքական պոեզիայի որոշ կողմերին ապացուցում է նաև պոեմի լեզուն...» նկատի ունի ժողովրդախոսակցական հայերենը (Է. Ջրբաշյան, Չարենցը եւ թուրքականը. «Աշխարհայացք եւ վարպետություն», էջ 160-161):

Իսկ պոեմի ամբողջ 17-րդ գլուխը դիմումի ձևով ուղղված է Խահակյանին:

1918, մարտ – «1918 թ. Յուլիսային Կովկասում՝ Մայկոպում, եղել եմ կամավոր կարմիրբանակային: Կամավորների կողմից Մայկոպը գրավելուց հետո՝ որպես պարսկահպատակ, մեկնել եմ Յասսատան» («Յամառոտ կենսագրություն», ԳՄ, 305):

1918, մարտ – Մոսկվայում լույս է տեսնում «Ֆուտուրիստների թերթ»-ը («Пролетарская культура»), որի օրինակներ իրենց բանաստեղծությունների հետ ստանձնում էին նաև պատերի: Ֆուտուրիզմը Ռուսաստանում ուներ մի քանի խմբավորումներ եւ մի քանի կենտրոններ՝ կուբֆուտուրիզմ, էգոֆուտուրիզմ... Այդ մտայնությունը յուրովի շարունակում էր ԼեՖ-Վը: Առանձին էին կոնստրուկտիվիստները, էքսպրեսիոնիստները: Իրենց ինքնուրույն ճանապարհն էին փորձում հարթել իմաժինիստները, ակմեիստները:

Պահանջը նույնն էր՝ անցյալը ժխտող նոր հեղափոխական արվեստ՝ նոր նյութ, նոր լեզու, պատկերային, կշռության նոր համակարգ: Գաղափարական ուղենիշը սա էր՝ հեղափոխությամբ պրոլետարիատը հեղաշրջեց աշխարհը, այդ հեղաշրջումը պետք է անի նաև արվեստի բնագավառում եւ հաստատի պրոլետարական արվեստի դիկտատուրա: Ասացին, տաք-տաք անցան գործի եւ հավատացին, որ հնարավոր է...

Այդ պահանջը առաջնային գերնպատակ հռչակելով միաժամանակ գլուխ են բարձրացնում պրոլետարական խմբակցությունները: «Պրոլետարական մշակույթ» («Газета футуристов») երկշաբաթաթերթի 2-րդ համարում «Յեղափոխությունը եւ պրոլետարիատի մշակութային խնդիրները» հոդվածում Վ. Պոլյանսկին հրահանգում է պետք է ստեղծել կապիտալիստական մշակույթից միանգամայն տարբեր բանվորական արվեստ, բուրժուազային հաղթելով ֆիզիկական ճրան պետք է հաղթել նաև հոգեպես: Պրոլետարիատը, «ձեռքն առնելով կառավարման ղեկը եւ նավն ուղղելով դեպի սոցիալիզմի թագավորություն, անխուսափելիորեն պետք է ստեղծի նոր մշակույթ՝ կոլեկտիվիստական սկզբունքներով»:

«Պրոլետարական մշակույթ» (Պրոլետկուլտ) խմբակցության շրջանակներում, նրանից անջատված կամ կիսանկախ, գործում էին ավելի քան երեք տասնյակ խմբակցություններ՝ «Կուզնիցա», «Օկտյաբր», «Սերապիոնյան եղբայրներ», «Գյուլագիական գրողներ», «Օպոյազ» (ձեռաբանական դպրոց), «Պերեկալ», «Ուղեկիցներ»... Ահա նրանց չա-



Փածո հանգանակը՝ Կիրիլովի «Մենք»-ը:

Мы во власти мятежного, старшого хмеля,

Пусть кричат нам: «Вы палачи красоты»,

Во имя нашего Завтра — сожжем Рафаэля,

Разрушим музеи, растопчем искусство цветы.

Все — мы, во всем — мы, мы пламень и свет побеждающий,

Сами себе Божество, и Судя, и Закон («Грядущее», 1918, ?2, с. 4).

«Արվեստի քուրմերին» բանաստեղծության մեջ Կիրիլովը նաև ավելացնում էր. «Он с нами лучезарный Пушкин, // И Ломоносов, и Кольцов» («Пролетарская культура», 1919, ? 7-8, с. 58): Պուշկինի անունով Պուշկին էր ոչնչացնում հենց Կիրիլովը՝ իր հիշյալ տողերի այս հրահանգով՝ «Յանուն մեր վաղվա այրեցր Ռաֆայելին, ավերեցր թանգարանները, տրորեցր արվեստի ծաղիկները»:

Ինչնակա՞ն կարգախոսները՝ «Մենք երկաթետոն» քնարերգուներ ենք» (Ն. Սկազին), «Մենք երկաթից ենք: Պողպատից» (Վ. Ալեքսանդրովսկի), «Մենք աճում ենք երկաթից» (Ա. Գաստել) («Пролетарские поэты первых лет советской эпохи», ?., 1959, ? 54, 88, 188):

Պոեզիայում սկսվել էր «երկաթի տենդի» ժամանակը (Ս. Եսենին):

Գործող բոլոր խմբակցություններն էլ հանդես էին գալիս պրոլետարական դրոշի ներքո եւ ձգտում գերիշխանության, մենիշխանության, պետական հովանավորության, կուսակցական աջակցության, բայց նպատակին հասնելու ներքին սկզբունքները տարբեր էին, որտեղից էլ դաժան գրապայքարը, որ սկզբում՝ 1920-ական թթ., ուներ գաղափարական-գեղագիտական բնույթ, իսկ 1930-ական թթ. վերածվեց իրար ոչնչաց-

նե՛րը» (Полное собрание сочинений, II, М., 1956, с. 16): Իսկ «Այն կողմին» բանաստեղծության մեջ ավելացնում է՝ երբ կհաղթենք կռվում եւ տոն կլինի՝ խնդրեմ,, ահա դուք եւ ձեր զարդարանքները՝ «Սիրեցեք, ինչ ուզում եք» (նույն տեղում, էջ 22):

Չարենցն անտարբեր չէր գրական այս նորությունների հանդեպ: Գաղափարի լինելով Մոսկվայում եւ մասնակցելով գրական միջոցառումներին տեսնում էր, թե ինչ է կատարվում: Այդ ամենը կարճ ժամանակ անց պետք է ընդուներ համահունչեանկան ընդգրկում եւ թափանցեցր նաև հայ իրականություն: Անհնարին էր դուրս մնալ գրական-մշակութային այս որքան գրավիչ ու գայթակղիչ, բուռն ու վարար, նույնքան ճակատագրական ու կործանարար շարժումից:

1918, 3 մարտ – Բրեստ-Լիտվսկի հաշտության պայմանագիրը, որ կնքվում է ՌԽՖՍՀ եւ Կենտրոնական ուժերի միջև, կործանարար ազդեցություն է ունենում հայ ժողովրդի համար: Գաղափարային կողմից պայմանագիրն ստորագրում է Կարախանը: 4-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ պարբերություններով բուլշեիկները պարտավորվում են թուրքերին վերադարձնել թե՛ պատերազմում գրաված Արեւմտյան Զայաստանի տարածքները, թե՛ 1878-ից ինքնակալության անցած Արդահանը, Կարսը, Բաթումը: Պայմանագիրն ուժը կորցրեց նույն թվականի նոյեմբերի 13-ին: Սրանից առաջ եւ այս ընթացքում հայ ժողովուրդն անցավ իր Գողգոթայի հերթական ճանապարհը: Մարտի 12-ին ընկավ Կարինը: Բրեստ-Լիտվսկի հաշտության պայմանագիրը հետո քանդվեց Արեւմտյան Զայաստանը՝ Վանը, Երզնկան, Բիթլիսը, Ալաշկերտը, Սեբաստիան, եւ ժողովուրդը հոսեց դեպի Կովկաս ու Ռուսաստան: Երկիրը գրկվեց իր տոհմիկ բնակչությունից:

Չարենցի փրկության համար ոտքի են կանգնում ազգի որդիները, այդ թվում՝ Անդրանիկը, ով թուրքական բարենաղթանքներով փետրվարի 9-ին իր կամավորներով դուրս է գալիս Թիֆլիսից եւ արդեն փետրվարի 16-ին Կարսում էր:

Այս ամենը խորապես անցնում էր Չարենցի անձնական ճակատագրի միջով եւ արտացոլվում այս ժամանակաշրջանին վերաբերող բազմաթիվ երկերում՝ «Ազգային երազ», «Յատված», «Խմբապետ Շավարշը» պոեմները, «Երկիր Նայիրի» վեպը, «Չարդագողի ճամփորդները», «Մարիոնետկա», «Մահվան տեսիլ» բանաստեղծությունները, «Ողջակիզվող կրակ» շարքը:

Ըստ Ալ. Չաբարյանի ենթադրության՝ Չարենցը եւ եղբայր Սողոմոնը Կարսում միացել են ճակատ մեկնող Անդրանիկի կամավորականներին («Եղիշե Չարենց», I, 1997, էջ 327-331, 339, 354): Նրա կարծիքով այդ են հուշում «Ազգային երազ»-ի տեղագրությունն ու թվագրությունը՝ «1917. 12 – 1918. 02, երգում - Թիֆլիս»:

Չարունակությունը՝ էջ 11

## Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը

### սկիզբը՝ էջ 10

**1918, 12 ապրիլ** – Թուրքերը մտնում են Կարս: Չարենցը թիֆլիսում էր:

**1918, 17-18 ապրիլ** – Գիշերը ժամը 12-ին փոխվում է տոմարը՝ եղածին ավելացվում է 13 օր: Այսպես՝ Չարենցը ծնվել էր մարտի 1-ին, հիմա նոր տոմարով նրա ծննդյան օրը դառնում է մարտի 13-ը: Այս փոփոխությամբ է պայմանավորված «*Հին Նոր տարի*» արտահայտությունը:

**1918, 1 մայիս** – Սողոմոնյանների ընտանիքը թիֆլիսից հիմա մշտական բնակության է մեկնում Ռուսաստանի Մայկոպ քաղաք:

«*Համաշխարհային*» ճանփորությունն ելած բանաստեղծը Արմավիրում հանդիպում է ընտանիքի անդամներին և նրանց հետ մեկնում Տիֆլիս: Ըստ Աշխեն Սողոմոնյանի եւ Արամ Մարտիրոսյանի՝ թիֆլիսից Վրացիական ֆուրգոնով, այդտեղից Արմավիր գնացքով ճանապարհը Չարենցն անցել է ոչ թե Վիվանի, այլ ընտանիքի անդամների հետ: Թիֆլիսից դուրս են եկել Կարսը համընկնող ապրիլի 25-ից (12 ապրիլ) մի քանի օր անց՝ մայիսի 1-ին:

Նույն թվականին մասնակցել է Մայկոպում եւ Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող քաղաքացիական իրադարձություններին: «1918-ի գարնան վերջերին Հյուսիսային Կովկասում <...> Չարենցն առաջիններից մեկն էր, որ զինվորագրվեց աշխարհազորայինների խմբին եւ մեկնեց ռազմաճակատ: Նա մասնակցել է Տիֆլիսից երկաթուղային կարենլոր հանգույցի գրավման մարտերին: Նույն տարվա աշնանը նա Մայկոպ է վերադարձել «Սոմա» եւ «Ամբոխները խելագարված» պոեմներն արդեն գրած» (Սերբո Սողոմոնյանի հուշերից, «Չարենցի հետ»: *Հուշեր*, 1997, էջ 21):

**1918, 23-29 մայիս** – Սարդարապատի հերոսամարտը: Հայկական զորքերի ընդհանուր հրամանատարը զորավար Մովսես Սիլիկյանը: Երկու մասի բաժանված զորքի մի մասի հրամանատարն էր Դրոն (Բաշ-Ապարան), մյուսինը՝ Դանիել Բեկ-Փիրումյանը (Սարդարապատի դաշտ): Մայիսի 21-22-ին հայերը պաշտպանվում էին թուրքերի գրոհից, 23-ին անցնում են հարձակման եւ բոլոր ուղղություններով փախուստի մատնում թշնամուն: Հաղթանակը փրկություն էր:

**1918, 28 մայիս** – Հայոց ազգային խորհուրդը թիֆլիսում հռչակում է Հայաստանի անկախությունը: Կառավարությունը թիֆլիսից երեւան է տեղափոխվում հունիսի 17-ին: Հայաստանը դառնում է պաշտնառական-ժողովրդավարական հանրապետություն: Ազգային խորհուրդը, որպես օրենսդիր մարմին, աշխատանքն սկսում է 1918 թ. օգոստոսի 1-ին: Առաջին Հանրապետությունը գոյատևեց երկու եւ կես տարի: Վարչապետներ՝ Հովհաննես Բաջաճյանի, Ալեքսանդր Խատիսյան, Համո Օհանջանյան, Սիմոն Վրացյան: Ստեղծվեց նախարարների խորհուրդը, ձեւավորվեցին եւ աշխատանքի անցան նախարարությունները:

Բնակչությունը՝ 800 000, այդ թվում՝ այլազգիներ:

1919-ի դեկտեմբերի 26-ին հայերենը հայտարարվեց պետական լեզու:

**1918, հունիս-հուլիս** – Ցարիցինում Չարենցը եղել է կարմիր զորքերի շարքերում:

**1918, հունիս-հուլիս** – Հյուսիսային Կովկասում գրում է «Սոմա (Նոր վերջին պոեմ)» երկը:

**1918, 6 հուլիս** – Թիֆլիսում սպանվում է «Մշակ»-ի երկարամյա խմբագիր Համբարձում Առաքելյանը, խմբագիր է նշանակվում ռուսական կրթությամբ եւ հայերենին վատ տիրապետող Տիգրան Հախումյանը՝ կարճ ժամանակ անց Չարենցի գրական «բարեկամն» ու հակառակորդը:

**1918, հուլիսից հետո** – Հյուսիսային Կովկասում գրում է «Ամբոխները խելագարված» պոեմը:

**1918, 23 օգոստոս** – Չարենցի «Երկիր Նայիրի» վեպի ընդհանուր մթնոլորտը պատկերացնելու համար հրապարակում ենք Կովկասյան ճակատի եւ հայերի ու Հայաստանի փրկության տարածաշրջանային պաշտպանության կոմիտեի ձեւաթղթի վրա Դոնի Ռուստովից Գրիգոր Չալխուշյանի նամակը Կարեն Միքայելյանին:

«...Ոչինչ միջոցառված – մեր պատմությունը շարունակվում է, նույն երեմիական ողբը. չքացավ եւ այն աղոտ լույսը, որ կարծես պլպլում էր մեր աչքերին: Միայն էր Ռուսաստանի հետ մեր ազգի բախտը կապվել. սիսալ էր կամավորական շարժումը, մեր ոգեւորությունը, ըմբոստ դուրս գալը: Ավա՞ղ, խաբված ենք, խաբված մարդկանցից, ազգերից, բախտից, Աստծուց: Հավատը արդեն մարում է սրտիս խորքում, բարեկամ... Գործում են մուրը կրծքիս մեջ, հինքիցայով, որովհետեւ պետք է գործել ու մահացել եմ այն մարդուն, որի մեջ ամենասիրականին թաղելու համար է ու մարդկանց առաջ չլալու համար է, որ դեռ եռանդ է պահել իր մեջ: Ձեզանցից ջոկ ոչ ոք թող չկարդա տողերս: Բավական չեմ եւ մեր հայկական խորհրդից, որը չգործեց այն եռանդով, որով պետք էր գործել: Սակայն եւ տարերք մեր դեմ են: Վրացիք՝ չեզոք, թուրքերը՝ թշնամական, ռուսը միշտ ռուս – թալանի կարող: Եվ միակ հույսը Կովկասի հայության վրա է: Գեթ բաժանվել անցներ նրանից, մնալ տեղը չկոտորված, որպեսզի ապագան մնար մեզ, նորից սկսելու, նորից կռելու մեր ազգի բախտը: Իսկ եթե կոտորվի...»

Բոլշևիկները առայժմ մեզ հալածում են. խլեցին մեր գեները (հինգ հարյուրից ավելի), նայում են մեզ վրա կասկածներով: Դեպի թուրքը ավելի մեծ համարում ունեն: Մոտ երկու միլիոն ժողովուհիք. մի միլիոնը ուղիղ թելով փոխադրեցինք: Ունենք կամավորներ. ճանապարհի չկա: Բաքուն պարկ է դառել, որի մեջ մնում են մեր ուղարկածները: Իբր թե տասը հազար կռվողներ մնացել են Բաքվում: Գանձակը թուրքերի ձեռին է, չեն թողնում, որ անցնենք: Այսպիսով ոգեւորության կրակը մարում է: Որոնում ենք ճանապարհ: Ծովը գերադասելի էր, բայց գերմանական սուզանավերը վտանգ են սպառնում: Մնում է ռազմական ճանապարհը, սակայն Վրացիական կազմ ոչ միշտ բաց է: Ահա մեր



*բախտը: Ներեցեք այս բոլոր տխուր տողերի համար, գրում են իբր գաղափարական ընկերի: Ավելին կասեն, գործում ենք բոլորս մեծ եռանդով: Կարծես վերջին կռիվն է, ու չենք խնայում մեր ուժերը: Իմ երեք որդիներս էլ գնում են: Փող ժողովվում է բավականաչափ: Եթե մեծամասնականները չզային, մեր գործը ավելի լավ կերթար, նրանց մտնելը, տասներկու միլիոն տուգանքը շատ բան խանգարեց, նամանավանդ նրանց գլուխ կանգնող մի լակոտ-ժուք, որը նրանց նախագահն է, մեր դեմ բռնած թշնամական վերաբերմունքը: Բողոքում են ուժեղ: Տեսնեք ինչ դուրս կգա» (ԳԱԹ, ԿՄՖ, 442):*

**1918, հոկտեմբեր** – Անդրկովկասի, մասնավորապես՝ Հայաստանի դրության մասին Օրջոնիկիձեն հեռագրում է Լենինին ու Ստալինին. «Հայաստանի դրությունը ողբերգական է: Երեւանի նահանգի երկու գավառների փոքրիկ կտորի վրա կուտակվել են ավելի քան 600. 000 զարթուկաններ, որոնք զանգվածաբար կոտորվում են սովից ու խոլերայից: Բռնագրաված գավառներում թուրքերը մորթել են բնակչության կեսը... Հայ ժողովուրդը անհամբերությամբ օգնություն է սպասում խորհրդային Ռուսաստանից» (ՀԱԱ, քաղվածքների ֆոնդ, գ. 255): Այս վիճակն արտացոլվել է Չարենցի «Ողջակիզվող կրակ» շարքի առանձին գործերում:

**1918, 30 հոկտեմբեր** – Մուղրոսի զինադադար Անտանտի Երկայացուցիչների ու Թուրքիայի միջեւ. վերաբերում էր հայ ռազմագերիների ազատագրմանը, Անդրկովկասից եւ Կիլիկիայից թուրքական զորքերի դուրսբերմանը:

**1918, նոյեմբեր** – Լույս է տեսնում Պրոլետկուլտի «Գործ» ամսագրի առաջին համարը: Գրական կյանքը Ռուսաստանում երկատվում է՝ ֆուտուրիզմ եւ պրոլետկուլտ, մի բան, որ 1922-ից պետք է արտացոլվեր նաեւ հայ իրականության մեջ:

**1918, 24 նոյեմբեր** – Մայկոպսկու լույսն արվեստի խնդիրներին նվիրված հանրահավաքում. «Արվեստը ոչ թե պետք է կենտրոնանա մենած թանգարան-տաճարներում, այլ լինի ամենուր՝ փողոցներում, տրամվայներում, ֆաբրիկաներում, արհեստանոցներում եւ աշխատավորների բնակարաններում» (ПЛОХОЕ

собрание сочинений, XII, 1959, с. 451):

**1918, աշուն** – Թիֆլիսում «Մշակ»-ի խմբագրատանը ծանոթանում է Ստեփան Զորյանի հետ: Չարենցն աղքատիկ հագուկապի մեջ էր՝ բուրդը դուրս ոչխարի հնամաշ մուշտակով: Եկել էր գտնելու Գարեգին Լեւոնյանի հասցեն, ով նույն «Մշակ»-ում գրախոսել էր «Դանթեական առասպել»-ը: Ըստ Զորյանի՝ «ճանաչեցիք իրար, բայց չմտերմացանք»: Այս օրերին Չարենցն ասել է. «Հիմա՛ էլ այնպես չի կարելի գրել, ինչպես գրում են թուրքերը եւ Իսահակյանը: Դա մեր պոեզիայի համար անցած էտապ է: Այս նոր օրերին հարկավոր է նոր պոեզիա: <...> Թե ինչ էր գրում, նախապես չէր ասում երբեք: Ավարտելուց հետո միայն կարդում էր նեղ շրջանում... Չէր սիրում խոսել եւ իր մտախառնումների մասին. գերադասում էր <...> ինքն իր մեջ հասունացնել դրանք, ապա գրել առնել մի երկու վարիանտով: Ուրիշների նման նա իր ստեղծագործական լաբորատորիան չէր մտցնում օտար մարդու եւ, ընդհակառակը, աշխատում էր անսպասելի հանդես գալ նոր գործերով եւ տպավորություն թողնել»:

Ըստ Զորյանի Չարենցը սիրում էր խնայ, ինչն ունենում էր անցանկալի հետեւանքներ: «Լինելով մարմնով փոքր, սիրում էր սակայն ունենալ միշտ մեծ սենյակ, մեծ թեֆ, մեծ գրույց, մեծ գիրք, մեծ խոսք: Սիրում էր գրել մեծ թղթերի վրա, խոշոր ձեռագրով, խոշոր գրչակոթով: Չայնն էլ երբեմն արհեստականորեն շինում էր բաս՝ խոսքն ավելի ազդեցիկ դարձնելու: Ու այդ մեծ բաների սերը եւ մեծության ձգտումը նրա մեջ մնացին մինչեւ կյանքի վերջը: <...> Սարդ այնպես բան պետք է գրի, որ ողջ ժամանակը արժան կանգնեցնեն... թարգմանեն բոլոր լեզուներով...»:

Դժգոհել է իր արտաքինից. «Ե, ինչ ասեմ թեզ, Արգար աղա, որ էս բիջիմն ես տվել ինձ»:

Հեղափոխական բանակների շարժման մասին ուզեցել է մի մեծ պոեմ գրել եւ ասել է, որ «Անաբազիս»-ի պես բան պիտի լինի: Պիտի լինել հեղափոխության յուրովի «Անաբազիս»-ը: Ասել է, որ մտադիր է գրել վեպեր, դրամաներ:

«Երեքի» բուռն օրերին ասել է, որ ամեն կերպ ուզում է ազատագրվել Տերյանի ազդեցությունից. «...հիմա Տերյանի ոգով ու

ծելով գրել չի լինի: Հեղափոխությունը պահանջում է պայքարի պոեզիա: <...> հրապարակով «թելով» Տերյանի վրա՝ միաժամանակ պաշտում էր նրան: Եվ մինչեւ վերջ էլ մնաց այդպես: <...> Տերյանին եւ սիրում էր, եւ մերժում... եւ մինչեւ կյանքի վերջը գտնում էր, որ նրանից լավ պոետ չունենք ու սիրով անգիր արտասանում էր նրա բոլոր բանաստեղծությունները...»

Երբեմն անկեղծության պահերին Չարենցն ասում էր ինձ.

– Գիտես, իմ ապրումների, զգացումների տասը տոկոսը չեն կարողանում արտահայտել: Մարդ կարողանա այս վիթխարի հեղափոխությունը նկարագրել այնպես, որ արտահայտի ամենը անցյալը, ներկան, ապագան... <...>: Մեծ, շատ մեծ բան գրելու սերը, ձգտումը երբեք չէր հեռանում նրանից... ինքն էր ասում, թե պատրաստվում է մեծ բան գրել» (Ս. Զորյան, Եժ, XI, 1985, էջ 310-319, 325; նաեւ՝ «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986 էջ 66-83):

Ավնիայի է, որ Զորյանը Չարենցին չի համակրել, ներքին վանող մի բան միշտ ուղեկցել է նրան, քողարկված հեզանքն անպակաս է, ինչը պարզ երևում է գրի մեջ. «Կային մարդիկ էլ, որ ֆրանսիական առակագիր Ֆլորիանի հնդկահավի պես նրա նույնիսկ անբովանդակ գործերի մեջ ուզում էին տեսնել մեծ խորություններ...»: Հաջորդում են էլ «զոհիկ գրվածք», էլ «ժամածռություն», էլ «վարճոց», էլ «մարմնով պստիկ այս Արամազդե, էլ «էզոցենտրիկ, ինքն իրենով տարված»:

Առավել սուր ու անզիջում է եղել խոսակցությունը «Ռոմանս անտեր»-ի կապակցությամբ. «Ինչ է, դու ուզում ես թուրքականի նման գեղական բաներ գրել կամ Իսահակյանի նման աշուղական նյնիմներ, որ քո ինտելիգենցիայի ճաշակը չվիրավորվի, եւ... ժողովուրդը հասկանա: Դրանց դարձ անցել է: Հարկավոր է նոր արվեստ...»:

«Ռոմանս անտեր»-ի մասին Զորյանի բացասական կարծիքը լսելուց հետո նրան համարել իր թշնամի, բայց հանդուժողական հարաբերությունները պահպանվել են (Ս. Զորյան, Եժ, XI, 1985, էջ 310-321):

Եվ սա այն դեպքում, երբ Չարենցն ամեն տեսակի գործեր ունի՝ բացի «անբովանդակ»-ը: Այստեղից էլ Զորյանի ժառանգների այն հետեւողական մտավայրությունը, որ Չարենցի մասին հուշերը հրատարակել են հատվածաբար:

Կար նաեւ հակառակը՝ Չարենցը մշտապես ծաղրել է Զորյանին նրան համարելով միջակ տափալություն, հոգեկան կարճատեսությամբ առաքող կույր աղիք, գավառացի վարժապետ: Այս տեսակետից սպանիչ է «14. III. 1934» թվակիր օրագրային գրառումը. «Խեղճ հայ գավառացի, որի ամբողջ տեսադաշտը Ղարաբիլիսան է... Տխուր է...» (ՆԷ, էջ 261, ավելի մանրամասն՝ իր տեղում):

Հարունակելի  
**Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ**  
**բանասիրական**  
**գիտությունների դոկտոր,**  
**պրոֆեսոր**

Աշխարհից

Կրթության արտերկյա փորձագետների նորարական գաղափարները

Ինովացիա բառը (լատիներեն in եւ novus) քարգանաբար նշանակում է փոփոխություն, բարեփոխություն, նորություն...

րի համար առանցքային է համարում «կրթական նոր բիզնես մոդելի» ձեռքբերումը, գործարկումը: Ներկայացնելով Ստեֆանոյի համալսարանի օրինակը...

Կրթական գործիչ Բրենդոն Բաստիդն առաջարկում է նորարար գաղափարներ բարձրագույն կրթության ոլորտում: Ըստ նրա՝ բուհի շրջանավարտները պատրաստ չեն աշխատանքի, հետեւապես պետք է կենտրոնանալ շրջանավարտի արտադրանքի-որակի, ինչպես նաեւ երկուստեք կատարված ներդրումների վերջնարդյունքների վրա:

շատ արագ (24-48 ժամ տրամադրել) իրականացնել ընդունելության որոշումների համարյա մեծ մասը: Բրենդոն Բաստիդն առաջարկում է քայլեր անել առցանց մենթորության եւ խորհրդատվության զարգացման, հմտությունների վրա հիմնված կրթության տարածման, բարձրագույն կրթության ճիշտ շուկայավարման եւ էական այլ հարցերի շուրջ:

Կրթության նորարար, խմբագիր Ռոբին Գ. Շուլմանը, կարելի էր ասել ստեղծագործականությունը, ներկայացնում է մի քանի եղանակներ, որոնց օգնությամբ ուսուցիչները կարող են դասարանները նորարար դարձնել: Նախ այն, որ ողջ դասարանի մտածելակերպի, տրամադրության փոփոխությունը սկսվում է ուսուցիչից եւ այն բնույթից, որ նա մտնում է դասարան, ու եթե ուսուցիչը, իսկապես, ոգեւորված է իր աշակերտները, ապա աշակերտները հակված կլինեն հետեւելու նրան: Դասարանը նորարար դարձնելու նպատակով պետք է մտածել աշակերտներին առաջնորդ դարձնելու մասին, հետեւապես՝ կարելի է անձին: Խնդիրը լուծելու փոխարեն ուսուցիչները կարող են օգնել աշակերտներին գտնել այն բացերը, որոնք կամբողջացնեն պահանջը: Խնդիրը, հարցի բացահայտումը հավասար է խնդրի, հարցի լուծմանը: Այս ամենը հնարավորություն կտա աշակերտներին զարգացնելու քննադատական հայացքները, մտածողությունը: Պետք է խրախուսել աշակերտներին ռիսկի դիմել: Կարելի է նաեւ այն, որ աշակերտներին հնարավորություն տրվի դասեր քաղել անհաջողություններից, սխալներից, առաջ շարժվել՝ հաջողություն գտնելու ճանապարհով: Ռոբին Գ. Շուլմանն առաջարկում է ստեղծել ուսուցման ճկուն միջավայր, այսինքն՝ գրագետ օգտագործել դասասենյակը: Վերջինս պետք է հնարավորություն տա ազատ աշխատելու, շփվելու, հաղորդակցվելու, չպետք է լինեն մարդաշատ, խառնաշփոթ վիճակներում, խրախուսելի է ազատ տարածքների առկայությունը: Դասի ընթացքում կիրառել բաց հարցեր, այսինքն՝ հարցեր առանց դասագրքային պատասխանների: Բաց հարցերի դեպքում կարող են լինել տարբեր պատասխաններ, տեսակետներ, ինչը հնարավոր է հանգեցնի ամուր համագործակցության,

հետաքրքիր զրույցների, նոր գաղափարների, ինչպես նաեւ զարգացնի առաջնորդության հմտությունները: Այս պրակտիկական կարող է օգնել լսարանին գիտակցելու իրենց ներուժը: Բաց հարցերի միջոցով աշակերտները կարող են կապեր հաստատել կյանքի, պատմության, իրական աշխարհի իրադարձությունների հետ: Կրթական տարբեր գործիչների, փորձագետների, նորարարների, տարբեր մասնագիտությունների տեղ մարդկանց հրավիրումը դասասենյակ կարող է բեկունակաբար լինել: Իսկապես, անկախ ամեն ինչից, արդյունավետ կլինի, եթե մարդիկ խոսեն ոչ թե իրար մասին, հետեւից, այլ՝ իրար հետ, միասին: Ռոբին Գ. Շուլմանը այժմեական է համարում դասի շրջված մոդելի, դիզայն-մտածողության, ինքնավարությունների եւ այլ եղանակների, մեթոդների կիրառումը:

Ի դեպ, աշխարհում կա միտում իբրեւ կրթության նորարար պետք է դիտել ուսուցիչներին, որոնք օգտագործելով իրենց փորձը, հմտությունները, կարողությունները, շահագրգռված են ստեղծելու պրոֆեսիոնալ (մասնագիտական) ապրանքանիշ: Կրթության նորարար ուսուցիչները կարող են հեղինակել գրքույկներ, կազմել դասալսանքներ, ստեղծել հավելվածներ, մշակել քարտեզներ, գործարկել 3D նյութեր, YouTube-յան ալիքներ եւ այլն: Մեր երկրում հանրակրթության նոր չափորոշիչները, իսկապես, ստեղծագործելու ծովածավալ հնարավորություններ են ընձեռում ուսուցիչներին: Հետեւապես՝ մենք անմասն չենք մնում աշխարհաքաղաքական զարգացումներից:

Իսկապես, չկա ավելի հաճելի բան, քան ստեղծագործ լինելը, որեւէ ստեղծագործական բան անելը: Ստեղծագործականությունը ոչ միայն մանկության խաղերում է, լեզուներում, այլեւ՝ ամենուր: Այն ներառում է մեր բոլոր զգայարանները, ստեղծում նոր գիտելիքներ, գաղափարներ, որոնք նախկինում գոյություն չուներին: Նորարարությունը ցանկալի փոփոխություն է, որն այսօր անհրաժեշտ է իրականացնել եւ դպրոցներում, եւ բուհերում: Ի դեպ՝ այդ երկար գործընթացը կարող է սկսվել հենց քեզից:

Վալտեր Բեթթերսու



«Այբ»-ի աշակերտների նախագծած սարքը կուղարկվի տիեզերք



«Այբ» դպրոցի նախագծային ուսումնական խմբերակային ակումբի Ad Astra թիմը դարձել է «Քենուրջյանի անվան համալսարանի աշակերտների նախագծած սարքը, որպես մրցույթի հաղթող, կուղարկվի տիեզերք: Թիմը նախատեսվում է հունիսին տիեզերք դուրս ելող ենթաուղծորային հրթիռից: Մրցույթին մասնակցել են 12-21 տարեկան հայ պատանիներ եւ երիտասարդներ: Եզրափակիչ փուլ անցել էին 3 թիմ (Ad Astra, AYAS, GDL), որոնք էլ ներկայացրին իրենց ստեղծած սարքը եզրափակիչ ընտրության համար: «Այբ» դպրոցի Ad Astra թիմի անդամներն են 12-րդ դասարանի աշակերտներ Անդրե Կարդանյանը, Էլինա Մելքոնյանը, Գայկ Փիլիպոսյանը եւ 11-րդ դասարանի Դավիթ Վանյանը, մենտորներն են ինժեներական ակումբի ղեկավար Վազգեն Գաբրիելյանը եւ ռեզուտաշինության լաբորատորիայի աշխատակից «Այբ» դպրոցի շրջանավարտ Ռուբեն Բերոբյանը: «Այբ» դպրոցի աշակերտների նա-

խագծած 197 գրամանոց սարքը (payload) տեղադրվելու է ենթաուղծորային հրթիռում եւ ուղարկվելու բաց տիեզերք՝ մինչեւ 125 կմ բարձրություն, այսինքն՝ հատելու է տիեզերքի պայմանական սահմանը (Karman line): Սարքը տիեզերքում մնալու է 2-3 րոպե եւ այդ ընթացքում տվյալներ է հավաքելու հրթիռի թռիչքի հետագծի, ջերմաստիճանի եւ ճշման փոփոխության, արագության, արագացման, ինչպես նաեւ ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության եւ օդոնի կոնցենտրացիայի մասին: Վերջին երկու չափումները կատարող սենսորները նախատեսվել են առաջարկվել են AYAS թիմի կողմից եւ ավելացվել են այդ թիմի հետ համագործակցության արդյունքում: Նախատեսված չափումներն իրականացնելուց հետո սարքը հրթիռի հետ միասին ետ է ընկնելու: «Այբ» դպրոցի նախագծային ուսումնական խմբերակային ակումբի աշակերտները մրցույթում հաղթելու շնորհիվ նաեւ հնարավորություն կունենան մասնակցելու «Ստարմուս» գիտական 6-րդ միջազգային փառատոնին:

Հոբելյան

«Շնորհավոր՝ 155-ամյակդ, սիրելի՛ դպրոց»

Օրը խորհուրդ ուներ Քանաքեռ-Զեյթուն համայնքի՝ Խ. Աբովյանի անունը կրող հ 84 հիմնական դպրոցում: Բակը լեցուն էր հյուրերով: Բոլորի աչքերը սեւեռված էին դպրոցի ճակատին փակցված ազդագրին «Շնորհավոր 155-ամյակդ, սիրելի՛ դպրոց»: Հիշողությունների հորձանքը պատել էր բոլորին: Հնչեց տնօրենի հրավերը. «Սիրելի՛ հյուրեր, 155-ամյա ասպնջական օջախը գրկաբաց ու սիրով ընդունում է բոլորիդ՝ միասին նշելու տոնը: Տոնը բոլորինս է»: Ինքնատիպ էր հոբելյանական օրը: Դպրոցի ամեն մի անկյուն լցված էր տոնով: Տոնախմբությանը

մասնակցում էին արդեն վաստակի գնացած պարոն Արթուր Սիրեկանյանը, Արկաղի Էլոյանը, ուսուցիչները, շրջանավարտները: Թանգարանի խոսուն վահանակները լռելայն պատմում էին դպրոցի հարուստ ու լեցուն կանազրության մասին: Դպրոցի 1974-1986 ուս.տարիների տնօրեն, արդեն 81 տարեկան Ա. Սիրեկանյանը կարոտակեզ հայացքով ուսումնասիրում էր թանգարանի նյութերը, մի ակնթարթում թերթում իր դպրոցական կյանքի էջերը եւ ժպտում տանուկ աչքերով: Օրվա խորհուրդն ամբողջական դարձ-

րեց բովանդակալից միջոցառումը: Գայանե Մողրովյանի եւ դպրոցի աշակերտների ջանքերով ներկայացվեց դպրոցի կենսագրությունը, մեծարեցին Արցախյան գոյամարտին մասնակցած հերոս տղաներին, անուն առ անուն հիշատակեցին դպրոցի պատերազմում զոհված սաների անունները, ծաղիկներ խոնարհեցին հերոսներին նվիրված խաչքարի առջև: Ցերեկույթի ընթացքում 1-ին դասարանի փոքրիկ Եվան անակնկալ մատուցեց ծառայած եղբորը՝ կարդալով իր գրած նամակը: Ցերեկույթը համեմված էր դպրոցի

երգչախմբի, պարի համույթի կատարումներով: Ելույթներում ընդգծվում էր, որ Խ. Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, Լուսինե Խալաթյանի տնօրինությամբ, նվիրումով է կատարում իր առաքելությունը: Միջոցառումն ավարտվեց Աբովյանի հիմնականում «Իմ անունը կրող դպրոցում միշտ պիտի հնչի կրթության ձայնը: Եղիցի լույս...»: Օրինյալ լինի ծնունդը, սիրելի՛ դպրոց. Երանի նրանց, ովքեր կնշեն քո ծննդյան 200-ամյակը:



Ի խնկարկունս

Հուշաքար եւ պուրակ՝ անմահ սաների հիշատակին

Հայոց մեջ, գուցե եւ ամբողջ աշխարհում, ավանդույթ է ազգի՝ հանուն հայրենիքի իրենց կյանքը տված զավակների հիշատակն ու սուրբ գործն անմահացնող հուշարձաններ, հուշակոթողներ եւ այլ կարգի շինություններ կառուցելը: Հայաստանում ինչպես նախորդ, այնպես էլ 44-օրյա պատերազմից հետո իրականացվել է իրականացվում են նման նախաձեռնություններ: Դրանցից էր մայիսի 30-ին Երեւանի Մուշեղ Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոցում տեղի ունեցած միջոցառումը՝ կրթօջախի 44-օրյա պատերազմում զոհված շրջանավարտների հուշաքարի եւ պուրակի բացումը: Միջոցառումն սկսվեց Հայաստանի Հանրապետության օրհներգով՝ Պաշտպանության նախարարության նվագախմբի կատարմամբ: Դպրոցի փոխտնօրեն Արդա Չիլինգարյանն ընթերցեց «Փողփողա նորից, իմ սուրբ եռագույն» բանաստեղծությունը: Այնուհետ ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Հերմինե Դավթյանը: Տնօրենն իր խոսքը սկսեց մեծն Լճիկի ասույթով. «Բավական չէ իր ազգի զավակը լինել, պետք է նաեւ նրա հրաշունչ զինվորը լինել»: Ապա ներկայաների

ծափերի նեցու հնչեցրեց զոհված սաների այլեւ անմահացած անունները՝ Արթուր Բալասանյան, Վահե Գրիգորյան, Հայկ Մելիքյան, Ռոբերտ Պետրոսյան: «Նրանք դարձան մեր երակազի հերոսները եւ մնացին հավերժ զինվորներ: Ասում են, եթե ցավ ես ապրում, ուրեմն ողջ ես: Ուրեմն քանի դեռ ողջ ենք, պիտի ապրենք, պիտի ապրենք արժանապատվորեն, մեր ամենօրյա աշխատանքով արժանին մատուցենք մեր տղաների սիրանքներին: Այս հուշաքարը մեր անմահ աշակերտ-հերոսների ներկայության խորհրդանիշն է, եւ այն միշտ վառ է պահելու նրանց հիշատակը: Դպրոցի բակի այս գողտրիկ անկյունն իր հուշաքարով դառնալու է լուռ խոնարհման սրբատեղի: Խոնարհումս մեր հերոսածին մայրերին: Այսօրվա խաղաղությունը ձեր զավակների Աստծո կողմից մարդուն շնորհված ամենաթանկ բանի՝ կյանքի գնով է ձեռք բերվել: Փառք ու պատիվ մեր քաջերին: Նրանք կան ու կմնան միշտ՝ մեր սիրված հերոս-աշակերտները: Նրանք չեն հեռացել մեզանից, նրանք դարձել են ծյուղը մեր հայոց տոհմածառի», - իր խոսքում նշեց տնօրենը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նահատակ սաների հիշատակը: Ապա Արդա Չիլինգարյանի ընթերցմամբ «Կոկոններում ընկան նրանք», բանաստեղծության ներքո 12-րդ դասարանի աշակերտները ծաղիկներ մատուցեցին զոհված տղաների մայրերին: Հուշաքարի բացման պատիվն ընձեռվեց Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանին եւ Հերմինե Դավթյանին: Հուշաքարի օրհնությունը կատարեց Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Պարթե քահանա Սուրադյանը: Կրթօջախի սաներ Ռոբերտ Ստեփանյանը եւ Ինեսա Պետրոսյանը հանդես եկան ասումներով, իսկ Ժան Միսկարյանը՝ երգերի կատարմամբ: Դպրոցի տնօրենը նշեց, որ հուշաքարի ու այգու վերականգնման եւ վերակառուցման աշխատանքներում իրենց մեծապես աջակցել են Երեւանի քաղաքապետի գլխավոր խորհրդակցական Կամո Արեւյանը, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանը, «Ապատ» կազմակերպության տնօրեն Վազգեն Իսրայելյանը,

ինչպես նաեւ ծնողներ՝ գեներալ Ջալալ Հարությունյանը եւ Սարինա Հարությունյանը: Հուշաքարն ու պուրակը կառուցվել են 20 օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչ գեներալ-լեյտենանտ Գեորգ Հակոբյանը դպրոցի տնօրենին հանձնեց պատվոգիր՝ երիտասարդ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար: Միջոցառմանը ներկա էին Արցախյան պատերազմի մասնակից կանանց հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ, Երեւանի պետական հումանիտար թղթի զինդեկ, գնդապետ Արդա Մերոբյանը, Երեւան քաղաքի ոստիկանության վարչության պետի օգնական, ոստիկանության վետերանների խորհրդի նախագահ Ավետիք Հարությունյանը, ԿԳՄՍ նախարարության, Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի, զինվորմասարիատի ներկայացուցիչներ, բուհերի աշխատակիցներ, դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ







